«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2024

ՆԱԽԱԲԱՆ

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ (այսուհետ՝ ԱՊԷՔ, ՄՈւՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձնահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 2

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 6

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 11

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 14

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 14

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 16

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 22

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 30

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 35

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 40

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 43

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 48

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 51

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 54

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 58

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 59

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 59

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 61

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 66

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 67

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 68

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում: Քոլեջն իր պատմությունը սկսել է 1968թ. որպես Կրասնոդարի «Էլեկտրոնային սարքաշինության» տեխնիկումի Աբովյանի երեկոյան մասնաճյուղ: 1971թ. №2 հրամանով տեխնիկումը վերանվանվել է «Աբովյանի երեկոյան էլեկտրոնային սարքերի» տեխնիկումի: 1972թթ. ուս. տարում տեխնիկումը տվել է առաջին շրջանավարտները՝ թվով 60: 1982թ. հուլիսի 17-ին №66 հրամանով «Աբովյանի երեկոյան էլեկտրոնային սարքերի» տեխնիկումը վերանվանվել է «Աբովյանի էլեկտրոնային սարքերի տեխնիկումի» և տվել է 1000-ից ավելի շրջանավարտ: 1996թ. փետրվարի 1-ին «Աբովյանի էլեկտրոնային սարքերի տեխնիկումը» վերանվանվել է «Աբովյանի էներգետիկական տեխնիկումի»: 2000թ. փետրվարի 2-ին «Աբովյանի էներգետիկական տեխնիկումը» վերանվանվել է «Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի», իսկ 2002թ. ՀՀ կառավարության հունիսի 20-ի որոշմամբ «Աբովյանի պետական էներգետիկական քոլեջը» վերանվանվել է «Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի:

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջը 2021 թ. անցել է Ինստիտուցիոնալ հավատարմագրում, ստացել՝ 2 տարի պայմանական ինստիտուցիոնալ հավտարմագրում:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

ԱՊԷՔ-ի դերը տարածաշրջանում և Կոտայքի մարզում կարևոր է՝ կրթական, տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական ուղղություններով մասնագետների պատրաստման տեսանկյունից: Քոլեջը համագործակցում է տեղական արդյունաբերական, գյուղատնտեսական և էներգետիկ ընկերությունների հետ, փորձելով ապահովել ուսանողների գործնական ուսուցումն ու պրակտիկայի իրականացումը իրական աշխատանքային միջավայրում:

Քոլեջը համագործակցում է Աբովյանի զբաղվածության տարածքային կենտրոնի հետ հիմնականում Արևային էներգիա, Հաշվապահական հաշվառում և SS ոլորտի մասնագետների բացը մարզում լրացնելու միտումով: Մյուս ՄԿԾ-ի նկատմամբ հետաքրքրությունը ավելի թույլ է:

Ներկայացված տվյալները հանդիսանում են քոլեջի հիմնական ցուցանիշներ՝ կրթական ծրագրերի լիցենզիոն տեղեր, ուսանողների և դասախոսական կազմի քանակ, ինչպես նաև շրջանավարտների զբաղվածության տվյալներ:

- Ջերմաէլեկտրակայաններ 20 հիմնական
- Էլեկտրամատակարարում 20 հիմնական
- Ջերմամատակարարում և ջերմատեխնիկական սարքավորումներ 20 հիմնական
- Էլեկտրահաղորդման գծերի տեղակայում և շահագործում 20 հիմնական
- Հաշվապահական հաշվառում 20 հիմնական 40/ՄԼԸ (Միջնակարգ, լիրվ, ընդհանուր)
- Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում 20 հիմնական 40 ՄԼԸ
- Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում 20 հիմնական 25 տեղ ՄԼԸ
- Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում /ՆՄԿ/ 20 հիմնական

Քոլեջում ներկայումս սովորում է 338 ուսանող: 2022-2023 ուսումնական տարում քոլեջը տվել է 72 շրջանավարտ: Նրանցից 20-ը շարունակել են կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում, 10-ը աշխատում են իրենց մասնագիտությամբ, իսկ 18-ը՝ ոչ մասնագիտությամբ:

Դասախոսական կազմը բաղկացած է 41 դասախոսից, որոնցից 2-ը աշխատում են համատեղությամբ: Քոլեջում գործատու-դասախոսներ չկան, իսկ վարպետների թիվը 1 է:

Աղբյուրների հղումներ. *քոլեջի գործունեության համապեքստի նկարագրման համար աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը, օր.՝*

- *ինքնավերլուծություն,*
- *ռազմավարական ծրագիր, ժամանակացույց,*
- *ստորաբաժանումների պլաններ, ընթացակարգեր և այլն,*
- *փորձագիտական այցի հանդիպումները,*
- *մարզի զարգացման ծրագիրը,*
- *այլ հայեցակարգային փաստաթղթեր*

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփումը (1-2 էջի սահմաններում) պետք է հնարավորություն ընձեռի պատկերացում կազմել ՄՈՒՀ-ի խոշոր խնդիրների և ձեռքբերումների մասին, որոնք փորձագետները վերհանել են փորձաքննության արդյունքում:

ԱՊԷՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է՝ իր սահմանված առաքելությամբ:

Փորձագիտական խումբը հաշվի է առել ԱՊԷՔ-ի, որպես միջին մասնագիտական ուսումնական հաստատության, նշանակությունը տարածաշրջանի և ՀՀ-ի համար, միաժամանակ ընդգծելով իրականացվող կրթական ծրագրերի առանձնահատկությունները: Քոլեջը առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցել է 2021 թ.-ին, որի արդյունքում քոլեջը ստացել է պայմանական հավատարմագրում 2 տարի ժամկետով: :

Քոլեջի՝ տվյալների հավաքագրման մեխանիզմներն են՝ հարցումները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքները, դասալսումները, հաշվետվությունները: Սակայն այս բոլոր տվյալները դեռևս համակողմանի վերլուծության չեն ենթարկվում մեծ խնդիրներ վերհանելու համար: Միաժամանակ, բացահայտված առանձին խնդիրներ էլ դեռևս կառավարչական որոշումների հիմք չեն դարձել:

Փորձագիտական խումբը գտնում է, որ, չնայած որոշ ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվում որոշ խնդիրներ և որոշ քայլեր են ձեռնարկվել որակի ապահովման և գործընթացների կառավարման ուղղությամբ, այնուամենայնիվ դեռևս քոլեջում տվյալահենք և ռազմավարական կառավարում չի իրականացվում:

Քոլեջում առկա եմ ՊԿՁ-ներին համապատասխան կրթական ծրագրեր: Ուսանողներին տրվող հանձնարարականները և իրականացվող գնահատումները գլխավորապես ուղղված են գիտելքի ձևավորմանն ու ստուգմանը: ՄՈՒՀ-ը չունի պրակտիկ ոլորտից ներգրավված դասավանդողներ: Գործնական կարողությունների ձևավորման համար քոլեջում առկա են լաբորատորիաներ, վարժադաշտ, որոնք հարուստ ժառանգության արդյունք են, միաժամանակ քոլեջը պրակտիկաների կազմակերպման համար համագործակցում է գործատուների հետ. սակայն այս ամենը մի կողմից լիարժեք արդյունավետությամբ չի կիրառվում, մյուս կողմից էլ ռեսուրսային բազան արդիականացման և գործատուների հետ համագործակցությունն էլ ընդլայնման ու

զարգացման անհրաժեշտություն ունեն: Այս ամենի արդյունքում, թերևս, տուժում է ուսանողների գործնական կարողությունների ձևավորման գործընթացը: Միաժամանակ, անկատար է գործնական կարողությունների գնահատման գործընթացը: Մինչդեռ քոլեջն ունի առանձին որոշ լավ օրինակներ, որոնք կարող է տարածել և ինստիտուցիոնալացնել:
Չնայած՝ քոլեջն ունի հարուստ ռեսուրսային ժառանգություն և ներգրավում է համապատասխան որակավորումներով դասավանդողներ, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում առկա են խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման հետ կապված.

Քոլեջը չունի հետազոտության և արտաքին կապերի ուղղությամբ նպատակներ և ռազմավարություն, ինչպես նաև խրախուսման մեխանիզմներ: Դասախոսական կազմը հիմնականում հետազոտությամբ և միջազգային փորձի ուսումնասիրմամբ չի զբաղվում, միայն առանձին դեպքերում, դասախոսներն իրենց նախաձեռնությամբ տպագրել են ուսումնական ձեռնարկներ, որոնք ներդրվել են ուսումնական գործընթացում: Ուսանողների վերլուծական և հետազոտական կարողությունների զարգացմանն ուղղված առաջադրանքներ հիմնականում առկա չեն, կրկին բացառությամբ առանձին որոշ լավ օրինակների:

Քոլեջն ունի տարբեր մեխանիզմներ ուսանողների կրթական կարիքների վերհանման ուղղությամբ, սակայն բացահայտված խնդիրները ինստիտուցիոնալ առումով բարեփոխումների հենարան չեն դառնում:

ՄՈՒՀ-ը որոշակիորեն ծանոթացնում է ուսանողներին կարիերայի հնարավորություններին, կազմակերպում է տարբեր միջոցառումներ, սակայն այդ պատկերացումները ուղղված են բավականին նեղ շրջանակի, և առկա են անորոշության տարրեր: Դեռևս առկա չեն շրջանավարտների գործունեության հետագծին հետևելու ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ինչը կարող էր հիմք դառնալ կրթական ծրագրերի շարունակական բարելավման համար:

Քոլեջում ներդրվել է հաշվետվողականության մեխանիզմ, որը բովանդակային առումով բարելավման կարիք ունի: Աշխատանքներ են տարվել թափանցիկության ապահովման ուղղությամբ գործընթացները բարելավելու նպատակով, որոնք առավել ակտիվ շարունակելու կարիք ունեն:

Քոլեջն համագործակցում է տեղական որոշ գործընկերների հետ՝ ուղղված կրթական կարիքների բավարարմանը, սակայն այդ համագործակցությունը չի լրացնում կրթական կարիքների ամբողջ ծածկույթը շրջանակի և բովանդակային խորության տեսանկյուններից: Մասնավորաբար չի կարողացել ներգրավել գործատու դասավանդողներ, և կրթական կարիքներով պայմանավորված լիարժեքորեն չի կիրառվում գործատուների ռեսուրսային բազան: Քոլեջը դեռևս միջազգային համագործակցություն չունի:

Ելնելով վերոնշյալից՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԱՊԷՔ-ը որոշ քայլեր է ձեռնարկում զարգացման ուղղությամբ՝ կարևորելով ուսանողների կարիքները և հաշվետվողականության որոշ մեխանիզմներ ներդնելով, սակայն փորձագիտական խումբը

գտնում է, որ արտաքին կապերի և հետազոտության ուղղությամբ հստակ նպատակների և արդյունավետ գործընթացների ապահովման ուղղությամբ առկա խնդիրները խոչընդոտում են քոլեջի զարգացումը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Տարածաշրջանի միակ Էներգետիկական քոլեջ:
2. Դիմորդների հավաքագրման մեխանիզմներ:
3. Ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ:
4. Մենթորության գործող քաղաքականություն, դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ:
5. Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար ռեսուսային բազայի հարուստ ժառանգություն:
6. Որակի ապահովման ներդրված համակարգ:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ներքին և արտաքին շահակիցների կարիքների թույլ արտահայտում:
2. Ռազմավարական կառավարման, պլանավորման, իրականացման և գնահատման մեխանիզմների անկատարություն:
3. Քոլեջի գործունեության արդյունավետության գնահատմանը միտված հետազոտությունների, գնահատման մեխանիզմների և հետազոտահենք կառավարաման անկատարություն:
4. Կրթական ծրագրով նախատեսված ուսումնառության արդյունքները երաշխավորող մեխանիզմների բացակայություն /դասավանդման, ուսումնառության ու գնահատման մեթոդների և ակնկալվող արդյունքների կապի խզում/:
5. Կարողությունների և հմտությունների ձևավորմանը միտված դասավանդման և գնահատման մեթոդների և մոտեցումների սղություն:
6. Կրթական ծրագրերի մշտադիտարկման և բարելավման գործընթացի անկատարություն:
7. Դասախոսների առաջընթացի մեխանիզմների բացակայություն, մոտիվացվածության պակաս:
8. Ուսումնական գործընթացի և հետազոտական բաղադրիչի փոխկապակցման մեխանիզմների անարդյունավետություն:
9. Ռեսուրսային բազայի ոչ լիարժեք արդյունավետությամբ կիրառություն:
10. Գործատուների ներգրավվածության պակաս և արտաքին կապերի ոչ լիարժեքություն՝ կրթական ծրագրերի կարիքների բավարարման տեսանկյունից:

Խորհրդատվություններ. *Ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման 3 ուղղությունների (**Որակավորումների արժանահավատ շնորհում, Տվյալահենք***

կառավարում և երկարաժամկետ զարգացում)՝ *ներկայացնել փորձագիտական խմբի խորհրդատվությունները, որոնց հիման վրա պետք է ՄՈՒՀ-ը կազմի թերությունների վերացման իր ծրագիրը:*

Տվյալահենք կառավարում

1. Ռազմավարական նպատակներն ու խնդիրները համապատասխանեցնել քոլեջի առաքելությանը, աշխատաշուկայի պահանջներին և քոլեջում առկա խնդիրներին՝ ներգրավելով ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակ, առանձնակիորեն՝ գործատուների ներգրավվածությամբ:
2. Ապահովել ռազմավարական նպատակների իրագործելիությունը երաշխավորող պլանավորման, իրագրծման գնահատման և բարելավման գործընթաց:
3. Իրականացնել ուսումնական, կառավարչական և այլ գործընթացների արդյունավետ և արժանահավատ գնահատման գործընթաց (բարելավել տվյալների հավաքագրման, վերլուծության գործընթացները, ուսումնասիրել քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնները)՝ վերջինս նպատակաուղղելով հետազոտահենք կառավարմանը, որոշումների կայացման գործընթացի լավարկմանը:
4. Ներդնել որակի ապահովման գործընթացներում քոլեջի ներքին և արտաքին շահակիցների ներգրավման գործուն մեխանիզմներ:

Որակավորումների արժանահավատ շնորհում

5. Բարելավել կրթական ծրագրերը, դասընթացների բովանդակությունը՝ ուղղված աշխատաշուկայի ու միջազգային պահանջներին համապատասխանեցմանը, կարողությունների և հմտությունների զարգացմանը, հիմնվել համակողմանի ուսումնասիրությունների (այդ թվում՝ միջազգային փորձի ուսումնասիրման) վրա:
6. Ապահովել ՄԿԾ-ով նախատեսված կարողություններն ու հմտությունները՝ բարելավելով կրթական ծրագրերի իրականացման /ներգրավել գործատուների, ավելացնել գործնական և լաբորատոր ժամերը, բարելավել դասավանդման ուսումնառության մեթոդները, լաբորատոր փորձերը, հանձնարարականները, պրակտիկաները և այլն/ և գնահատման գործընթացները /ներդնել ձևավորող գնահատման մեխանիզմներ, պրակտիկատի գնահատում և այլն/, միաժամանակ ապահովելով համապատասխան դասախոսական կազմ և ենթակառուցվածքներ/ այդ թվում պրակտիկայի վայրեր/:
7. Ապահովել առկա ենթակառուցվածքների և ռեսուրսների արդյուվետ կիրառելիություն և ուսանողակենտրոն միջավայր:
8. Ներդնել դասախոսական կազմի կատարելագործման և առաջընթացի ապահովման գործուն մեխանիզներ՝ բխեցնելով դրանք ռազմավարական նպատակներից և կրթական կարիքներից:

Երկարաժամկետ զարգացում

9. Սահմանել հետազոտության և արտաքին կապերի ուղղությամբ իրագործելի ռազմավարական նպատակներ՝ ուղղված կրթական ծրագրով նախատեսված արդյունքների և կարիքների ապահովմանը, ֆինանսական մուտքերի բազմազանեցմանը, ռեսուրսների և քոլեջի զարգացմանը:

10. Ներգրավելուսանողներին և դասախոսներին հետազոտական աշխատանքներում՝ կրթական ծրագրերի ուսումնական բաղադրիչի հետ փոխկապակցվածությամբ:

11. Ընդլայնել գործատուների հետ համագործակցության շրջանակը՝ուղղված կրթական կարիքների բավարարմանն ու ըստ հնարավորության դասավանդողների կատարելագործմանը:

_____

Փորձագիտական խմբի ղեկավար Արմենուհի Սարգսյան

(Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն)

29.07.2024 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. Արմենուհի Սարգսյան - ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, առաջատար գիտաշխատող, փորձագիտական խմբի ղեկավար:
2. Գայանե Համբարձումյան- Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, փորձագիտական խմբի անդամ:
3. Օլեգ Գևորգյան - Դոցենտ, ՀԱՊՀ Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի Գիտական, գիտատեխնոլոգիական համագործակցության և արտաքին կապերի գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ:
4. Լիլիթ Նազարյան -Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի Հաշվապահական հաշվառում մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող-անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ, Քարտուղարության բաժնի մասնագետ՝ Լիլիթ Ղազարյան:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 21.11.2023 թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (21.11.2023թ). Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև 02.04.2024 թ. կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը 2024 թ. փետրվարին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

ԱՊԷՔ-ը ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 26.04.2024թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

31.05.2024 թ. առցանց հանդիպում է տեղի ունեցել ԱՊԷՔ ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024 թ. հունիսի 10-12-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝

ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև այցելություն պրակտիկաների վայրեր, ռեսուրսերի դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 29.07.2024թ.:

2024 թվականի օգոստոսի 15-ին քոլեջի կողմից ՈԱԱԿ է ներկայացվել Փորձագիտակ զեկոյցի նախնական տարբերակի վերաբերյալ առարկություններ: Առարկությունները ուսումնասիրվել, քննարկվել է փորձագիտական խմբի կողմից և 17.09.2024թ. ժամը 16:00-ին կազմակերպվել հանդիպում՝ քոլեջի, փորձագիտական խմբի և ՈԱԱԿ-ի միջև: Քննարկման արդյունքում՝ քոլեջը փորձագիտական խմբի կողմից ստացել է իր ներկայացրած առարկությունների մանրամասն պարզաբանումներ և եկել այն համաձայության, որ փորձագիտական զեկույցում բոլոր փաստերն հիմնավորված են և որևէ փաստ փոփոխման ենթակա չէ:

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Վերջնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 19.09.2024թ.:

Համակարգող Լիլիթ Ղազարյան
(Համակարգողի ստորագրությունը)

19.09.2024 թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ի. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ՝ Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: «Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության առաքելությունը ձևակերպված է 2023-2028 թթ.-ի Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ կամ ՋԾ): Ըստ դրա քոլեջի հիմնական առաքելությունն է՝ գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱԾ-ի 4-րդ և 5-րդ մակարդակին համապատասխան: Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված են քոլեջի զարգացման նպատակները:

Քոլեջի հիմնական նպատակներն են՝ պահպանել կրթական բարձր չափանիշներ և հնարավորություն տալ սովորողներին՝ լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ճկուն ուսումնական ծրագրեր:

Քոլեջի նպատակներից են նաև՝

ա) դառնալ ուսանողակենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքի և մասնագիտական կարիերայի՝ գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան ՝ նպաստելով կրթական ծառայությունների շուկայի ձևավորմանը, և այդ շուկայում առաջարկվող ծառայությունների համապատասխանեցմանը ներկայումս արդեն իսկ ուրվագծվող ապագայի կենսական պահանջներին, դրանց բազմազանությանը թե՛ մատուցվող ծառայությունների բովանդակության և թե՛ ձևի առումով:

բ) ստեղծել մեծ հելիո-էլեկտրատեխնիկայի լաբորատորիա: Արևային էներգիայի օգտագործման (հավաքման, վերափոխման) կայանների կոմբինացված հելիո համակարգերի և այլ հելիոտեխնիկական միջոցների կառուցում, արտադրում, շահագործում և սպասարկում:

Լինելով էներգետիկայի բնագավառի միակ քոլեջը ՀՀ միջին մասնագիտական կրթության համակարգում՝ ընդլայնել էներգետիկ և էներգետիկային հարող ոլորտների և մասնագիտությունների շրջանակը՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկի միտումները:

ՌԾ նպատակների իրականացման համար կազմվել է պլան-ժամանակացույց, որտեղ նշված են հիմնախնդիրներ, կատարողներ, ժամկետներ, ակնկալվող արդյունքներ և գնահատման ցուցիչներ: Սակայն նպատակները և հիմնախնդիրները հիմնականում կրկնում են նախորդ ՌԾ-ի նպատակներն ու հիմնախնդիրները, բացի այդ հիմնախնդիրները հիմնականում շենքային և տարածքային պայմանների բարելավման և նորոգման աշխատանքներ են ենթադրում և չեն ծածկում նպատակների իրագործելիությունն ապահովող խնդիրների ամբողջական տիրույթը:

Փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզվեց, որ էներգետիկական ուղղությամբ նոր կրթական ծրագրեր ներդնելու մտադրություններ են առկա, մասնավորաբար այլընտրանքային էներգիայի ուղղությամբ: Սակայն միաժամանակ պարզվեց, որ ըստ որոշ մասնագիտությունների աշխատաշուկայի որոշակիության հարցում առկա են անհստակություններ:

Սահմանված նպատակների իրագործման ուղղությամբ դեռևս հիմնականում բավականաչափ քայլեր չեն իրականացվել, սակայն այդ ուղղությամբ ջանքեր են գործադրում:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսները, իսկ արտաքին շահակիցներն են գործատուները, շրջանավարտները, ծնողները: ԶԾ-ն մշակելիս կարիքների վերհանում չի իրականացվել: ՌԾ-ն հաստատվել է կառավարման խորհրդի կողմից, սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ արտաքին շահակիցները, ուսանողները և կառավարման խորհրդի կազմում չընդգրկված դասավանդողները հիմնականում իրազեկ չեն ռազմավարական նպատակներից և մասնակցություն չեն ունեցել դրանց ձևավորմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը և սահմանված նպատակները: Միաժամանակ պետք է նշել, որ Աբովյանի էներգետիկական քոլեջը շահակիցների կողմից ընկալվում է գլխավորապես էներգետիկական ոլորտում համապատասխան կրթական ծրագրեր իրականացնող հաստատություն, չնայած, որ առաքելությունն ընդհանրական է և չի շեշտադրում առանձնահատկությունը, բացի այդ՝ ուսանողների շուրջ 50%-ն են ուսումնառում էներգետիկական ոլորտի մասնագիտություններով: Պետք է նշել, որ էներգետիկական ոլորտի առանձնահատկության շեշտադրում առկա էնպատակներում:

Որպես այդպիսին ԶԾ գնահատման հստակ մեխանիզմներ քոլեջում առկա չեն: Քոլեջի հաշվետվությունները փոխկապակցված չեն ԶԾ նպատակների հետ: Աշխատանքային պլանները և հաշվետվությունները բխում են կանոնակարգային գործառութային շրջանակներից: Այնուամենայնիվ, փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի գործունեությունը որոշակիորեն համապատասխանում է ՌԾ նպատակներին և խնդիրներին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի դերն ու նշանակությունը որպես ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներում էներգետիկական ոլորտում

կրթական ծրագրեր իրականացնող հաստատության և կարևորում է նաև քոլեջի ջանքերը այդ ուղղությամբ կրթական ծրագրերի ընդլայնմանն ուղղված: Սակայն փորձագիտական խումբը կարևորում է, որ ՌԾ նպատակների ձևավորման ու դրանց իրականացման գործընթացում ակտիվ ներգրավվածություն ունենան ներքին և արտաքին շահակիցները, այս տեսանկյունից հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտություն ունի գործատուների ներգրավումը, քանի որ նրանց հետ թույլ կապը կարող է հանգեցնել նրան, որ նպատակներն և հնարավորությունները ամբողջական չդիտարկվեն: Միաժամանակ գործատուների հետ կապի ամրապնդումը կարող է նաև հանգեցնել աշխատաշուկայում շրջանավարտների դերի որոշակիացման:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը գիտակցում է երկարաժամկետ պլանավորման կարևորությունը և դրան ուղղված ՌԾ է կազմել, նաև կարևոր է կարճաժամկետ պլանավորումների և հաշվետվողականության որոշակի մեխանիզմի առկայությունը: Սակայն այս մեխանիզմների միմյանց հետ փոխկապակցվածության բացակայությունը և ՌԾ-ում նպատակների և սահմանված գործողությունների միմյանց հետ ոչ լիարժեք համաձայնությունը վկայում են այն մասին, որ երկարաժամկետ գործող պլանավորում այնուամենայնիվ դեռևս առկա չէ: Սա, թերևս կարող է հանգեցնել սահմանված նպատակների ոչ լիարժեք կամ անարդյունավետ իրագործելիության:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊԷՔ-ն առանձնակի առաքելություն ունի ՀՀ համար, ծավալում է գործունեություն, որն արտահայտում է քոլեջի հիմնական նպատակները, որոնք համահունչ են ՈԱԾ-ի 5-րդ մակարդակին, կարևորել է հաշվետվողականության մեխանիզմի ներդրումը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԷՔ-ը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊԷՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի կառավարումն իրականացվում է տնօրենի, Կառավարման և Մանկավարժական խորհուրդների կողմից, տնօրենն իրականացնում է ընթացիկ կառավարումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական համապատասխան պլանավորում դեռևս չի իրականացվել՝ գնահատելու համար, թե որքան ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ ՌԾ նպատակների իրականացման համար :

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի ՌԾ պլան-ժամանակացույցում տեսանելի չեն ռազմավարական նպատակներին հասնելու և պլանավորված գործողությունների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները: Ֆինանսական մուտքերը հիմնականում պետբյուջեից է և որոշակիորեն վարձավճարներից: Քոլեջը նախորդ ՌԾ-ով և նոր ՌԾ-ով պլանավորել է բազմազանեցնել ֆինանսական մուտքերը, սակյան այս ուղղությամբ արդյունքներ դեռևս առկա չեն:

Փորձագիտական այցից պարզվեց, որ կառավարման խորհուրդը նախաձեռնողականություն չի ցուցաբերում ռազմավարական կառավարման հարցում:

Ֆինանսների բաշխումը քոլեջը իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա, ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների աշխատավարձերը (շուրջ 85 %), ուսումնական սարքավորումների և գույքի (2023 թ.-ին 0%, իսկ 2022 թ.-ին՝ շուրջ 0.9%) ձեռքբերում, ինչպես նաև գրասենյակային ծախսեր (շուրջ 0.3 %)՝ հիմք ընդունելով ստորաբաժանումների ներկայացրած զեկուցագրերը: Փորձագիտական այցից պարզվեց, որ վերջին տարում խնդիր է առաջացել բյուջեի հետ, քանի որ այն ըստ նախնական հաշվարկների չէր բավականացնում նույնիսկ աշխատավարձերի համար:

ՄՈՒՀ-ն ունի սահմանած կազմակերպական կառուցվածք, որը 2023-2028 թթ.-ի ՌԾ-ով պայմանավորված փոփոխություններ չի կրել:

ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև առկա ուղղահայաց կապերը, տեսանելի չեն հորիզոնական կապերը: Քոլեջում գործող խորհուրդների, ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում է քոլեջի կանոնադրությամբ, համապատասխան կանոնակարգերով, ինչպես նաև պաշտոնների նկարագրերով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի հաստիքային աշխատողները հիմնականում չեն իրականացնում մեկից ավելի գործառույթներ, միայն վարչական աշխատանքից զատ ներգրավված են դասավանդման գործընթացում:

Փորձագիտական այցից պարզվեց, որ վարչական աշխատակիցները ապահովված են համապատասխան հարմարավետ աշխատասենյակներով, սակայն մի շարք դեպքերում բացակայում էին համակարգիչները, երբեմն էլ՝ համակարգիչների առկայության դեպքում, աշխատակիցների կողմից աշխատանքները ծավալվում էին առանց համակարգիչների:

Դասախոսական, ուսանողական համակազմերը ընդգրկված են կառավարման, մանկավարժական խորհուրդներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս խորհուրդներում ներգրավված ուսանողները և դասախոսները նախաձեռնողականություն չեն ցուցաբերում կարիքների վերհանման համար: Տեսանելի չեն նաև նիստերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման և մյուս շահակիցներին դրանց մասին իրազեկման քայլերը:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ տարեկան՝ կարճաժամկետ պլանավորումներով: Ստորաբաժանումների

աշխատանքային պլանները կազմվում են տարեկան՝ կարճաժամկետ պլանավորմամբ: Պլանավորման փաստաթղթերի դիտարկումը ցույց տվեց, որ ՌԾ հիմնախնդիրները և նպատակները հիմնականում կրկնում են նախորդ տարիների հիմնախնդիրները և նպատակները, միաժամանակ հիմնականում կրկնվում են գործողությունները տարեկան աշխատանքային պլաններում, չնայած որ լիարժեք էլ արտահայտված չեն: Սակայն հարկ է նշել, որ մի շարք ստորաբաժանումների դեպքում միայն 1 տարվա համար է առկա պլանավորում, իսկ մյուս դեպքերում՝ թերևս, 2 տարի: Ընդ որում, տարեկան պլանավորման մեջ չի ընդգծվում ՌԾ հիմնախնդիրը: Ընդհանուր առմամբ աշխատանքային պլաններում սահմանված են գործողություններ, սակայն չեն սահմանվում վերջնարդյունքներ: Փորձագիտական այցից պարզվեց, որ ՌԾ նոր պլանավորումը ստորաբաժանումների գործունեության փոփոխությունների չի հանգեցրել:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջում կառավարումն իրականացվում է վերևից ներքև ուղղահայաց կառավարմամբ, իսկ հաշվետվողականությունը՝ ներքևից վերև: Ստորաբաժանումների միջև գործառնական կապերը թույլ են զարգացած: Տարբեր ստորաբաժանումների աշխատանքային պլանները պայմանավորեցված են իրենց կանոնակարգային գործառույթներով, ըստ աշխատանքային պլանների տեսանելի չեն տարբեր ստորաբաժանումների համատեղ աշխատանքը:

Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների հաշվետվողականության մեխանիզմը նոր է ներդրվել, ընդ որում ստորաբաժանումները հաշվետվությունները ներկայացնում է ՈԱԿ-ին: Դրա արդյունքներով ՈԱԿ-ն իրականացնում է որոշակի վերլուծություն, որը սակայն հետագա կիրառելիություն չի գտնում: Փորձագիտական այցից պարզվեց, որ առարկայական հանձնաժողովները հաշվետվություններ են ներկայացնում մանկավարժական խորհրդին, տնօրենը հաշվետվություն է ներկայացնում կառավարման խորհրդին: Հաշվետվությունների դիտարկումը ցույց է տալիս, որ ստորաբաժանումների և տնօրենի տարեկան հաշվետվությունների մեջ արտահայտված չէ վերլուծական բաղադրիչը: Հաշվետվությունները հիմնականում նկարագրական են, միայն ՈԱԿ-ի հաշվետվություններն են որոշակիորեն վերլուծական բաղադրիչ ներառում: Միաժամանակ տեսանելի չէ հաշվետվությունների գնահատման և ՌԾ նպատակների իրագործելիության կապը:

Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն որպես այդպիսին չի կատարվել, նախորդ ռազմավարական ծրագրի կատարողականի վերլուծություն առկա չէ, նոր ՌԾ-ում առանձնացրել են թույլ և ուժեղ կողմեր, սակայն դրանք չեն բացահայտում քոլեջի գործունեության վրա ազդող գործոնները: Արդյունքում նոր ՌԾ-ում հիմնախնդիրները հիմնականում ուղղված են նորոգման աշխատանքներին և կրկնում են նախորդ ՌԾ-ով նախատեսված հիմնախնդիրները և չեն ծածկում սահմանված նպատակները, չեն վերանայվել ռազմավարական ուղղությունները, սահմանված նպատակները ևս մեծապես կրկնում են նախորդ ՌԾ նպատակները: Հարկ է նշել, որ

մասնավորապես արտաքին կապերի ուղղությամբ քոլեջը ռազմավարական նպատակներ չի սահմանել:

Քոլեջը ՈԱԿ-ի և Կարիերայի կենտրոնի հարցումների միջոցով իրականացնում է ներքին խնդիրների վերհանում, օրինակ՝ դասավանդման որակի և արդյունավետության գնահատման ուսանողական հարցում, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման հարցում, պրակտիկաների վերաբերյալ հարցում, կառավարման խորհրդի կարիքների վերհանման հարցում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ հարցումների արդյունքներով էական խնդիրներ չեն բացահայտել և դրանք փոփոխությունների հիմք չեն հանդիսացել:

Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների որոշակի ուսումնասիրություն իրականացվում է կարիերայի կենտրոնի կողմից՝ շրջանավարտների շրջանում հարցումների միջոցով: Քոլեջը աշխատաշուկայի ուսումնասիրություն համարում է որոշ կայքէջերում թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարությունների դիտարկումը: Փորձագիտական այցից պարզվեց, որ գործատուների շրջանում հարցումներ կամ հանդիպում-քննարկումներ չեն իրականացվում, նրանց հետ կապը թույլ է արտահայտված:

Ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության և ռիսկերի վերհանման համար մշակված գործիքակազմ քոլեջը դեռևս չունի:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում առկա հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլերում, ընդ որում հաճախ նաև իրականացվող գործընթացները պլանավորումներից բխող իրողություններ չեն կամ պլանավորմամբ նախատեսված գործընթացները չեն իրականացվում: Փաստաթղթերի մշակումն ու հաստատումը պայմանավորված է հիմնականում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացով, սակայն դրանք դեռևս գործուն կիրառություն չեն ունեցել:

Քոլեջը շրջանավարտնի հաջողված պատմությունների վերաբերյալ տեղեկատվություն չի հավաքագրում և տարածում: Կրթական ծրագրերի վերաբերյալ քոլեջը տեղեկատվություն է հավաքագրում դասալսումների միջոցով, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների միջոցով: Ուսումնական մասում ըստ խմբերի, կուրսերի հավաքագրվում են ուսանողների ընթացիկ, եզրափակիչ՝ կիսամյակային և տարեկան առաջադիմությունների արդյունքներ, փորձագիտական այցից պարզվեց, որ տվյալները գրառում են ձեռագիր մատյաններում, իսկ հաշվարկները իրականացվում են առանց համակարգչային հնարավորությունների կիրառման:

ՌԾ-ում ներկայացված նպատակները հստակ և արդյունահենք չեն, իսկ արդյունքների գնահատման համար սահմանված չափանիշները թույլ չեն տալիս օբյեկտիվ պատկեր կազմել արդյունքների ձեռք բերման աստիճանի վերաբերյալ: ՌԾ-ում սահմանված նպատակների համար չեն սահմանվել նպատակի իրագործումից ակնկալվող արդյունքներ և արդյունքների գնահատման չափանիշներ:

Քոլեջը չունի տեղեկատվության հավաքագրման և դրանց վերլուծման գործընթացները գնահատող մեխանիզմների արդյունավետությունը վերլուծող գործիքակազմ:

Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, նաև ուսանողական ներուժի կիրառմամբ ստեղծել են կայքէջ, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները, սակայն մասնավորապես քոլեջի ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում չի իրականացվում, ապահովված չէ կառավարման որոշումների թափանցիկությունը արտաքին շահակիցների համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի կառավարման համակարգում հստակեցված են գործառութային շրջանակները և որոշումների կայացման գործընթացն էլ հիմնված է հստակ կարգերի վրա: Սա ապահովում է գործընթացների կանոնակարգվածություն:

Փորձագիտական խումբը նշում է, որ չնայած, որ քոլեջը մշակել է ՌԾ և դա ՌԾ ներդրման առաջին փորձը չէ, սակայն քոլեջը դեռևս չի կարողանում ապահովել երկարաժամկետ իրագործելի ՌԾ նպատակների և հիմնախնդիրների սահմանում և առկա չեն դրանց իրագործելիության տանող կարճաժամկետ պլանավորում և ՌԾ նպատակների իրագործման հաշվետվողականություն: Միաժամանակ, քոլեջը նպատակներ սահմանելիս չի դիտարկում իր գործունեության բոլոր հիմնական ուղղությունները: Այս ամենը վտանգում է ՌԾ նպատակների իրագործելիությունը:

Քոլեջը գիտակցել է, որ ֆինանսական մուտքերի բազմազանեցումը խնդիր է հանդիսանում և նկատի է ունեցել իր այժմյան և նախորդ ՌԾ-ում, որը խնդիրը է հանդիսացել նաև նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում, սակայն քոլեջն այս ուղղությամբ դեռևս արդյունքներ չունի: Սա, թերևս, հանգեցրել է նրան, որ այժմ քոլեջը որոշակի ֆինանսական խնդիրների առաջ է կանգնած նույնիսկ աշխատավարձի ֆոնդի բավարարման տեսանկյունից, իսկ այլ ծախսերի համար մնացած գումարը մինչ այս էլ շատ քիչ տոկոս է կազմել:

Քոլեջի բոլոր հաստիքները համալրված են և, թերևս, նկատելի չէին գործառութային գերծանրաբեռնվածության դեպքեր: Սակայն ստորաբաժանումների աշխատանքային պլանների և ՌԾ նպատակների փոխկապակցվածության բացակայությունը թույլ չի տալիս քոլեջին գնահատելու ըստ ՌԾ նպատակների մարդկային ռեսուրսների բավարարությունը: Միաժամանակ փորձագիտական խումբը կարևորում է նվազագույն համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը նաև վարչական աշխատանքների իրականացման և կազմակերպման գործընթացներում, քանի որ դրանց չկիրառելը անխուսափելիորեն հանգեցնում է անարդյունավետության:

Փորձագիտական խումբը նշում է, որ չնայած առկա են մեխանիզմներ, որ թույլ են տալիս ներքին շահակիցներին մասնակցելու իրենց վերաբերող որոշումների կայացմանը, սակայն նկատելի չէ նրանց ներգրավվածությունը: Ներքին շահակիցների մոտիվացված ներգրավվածությունը այս գործընթացներում կնպաստի խնդիրների ամբողջական

վերհանման և հնարավորությունների առավելագույն դիտարկման, ինչը կարող է հանգեցնել նաև պլանավորման և իրականացման գործընթացների անխզելի փոխկապակցվածության երաշխիքների ստեղծման:

Փորձագիտական խումբը նշում է, որ, չնայած ՈԱԿ-ը սկսել է որոշ հետազոտություններ և վերլուծություններ իրականացնել, սակայն դրանց համակողմանի չլինելու արդյունքում չեն կարողանում էական խնդիրներ վեր հանել և բերել աշխատանքային հաջորդ քայլի և որոշումների կայացման համար հիմք չեն դառնում:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը դեռևս չի կարողացել որակի կառավարման սկզբունքը դարձնել կառավարման մշակույթի մաս: Սրա արդյունքում դրսևորվում են մի շարք երևույթներ ինչպիսիք են. մշակվել և հաստատվել են մի շարք փաստաթղթեր, որոնք չեն կիրառվել և դեռևս առկա չեն դրանց կիրառման նախադրյալներ: ՌԾ նպատակների, ռազմավարական հիմնախնդիրների և կարճաժամկետ պլանավորման գործընթացների աղճատում, վերջին սանխուսափելիորեն հանգեցնում է նաև ռազմավարական և կարճաժամկետ պլաններով նախատեսվող արդյունքների ձեռք բերման աստիճանի գնահատման գործընթացների աղճատման և իրականանալիության խնդիրների: Այս ամենն էլ իր հերթին խոչընդոտում է հետագա համընթաց բարելավումների գործընթացը: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՊԻԳԲ շրջափուլի բոլոր փուլերում առկա են խնդիրներ:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը փորձեր է կատարում տարբեր ազդակների միջոցով իր գործունեության վրա ազդող գործոններ ուսումնասիրելու, սակայն փորձագիտական խմբի համար կարևոր են համակողմանի տվյալների հավաքագրումն ու վերլուծումը, հետազոտահենք որոշումների կայացման նպատակով:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը կրթական ծրագրերի վերաբերյալ որոշ տեղեկատվություն է հավաքագրում, սակայն այդ մեխանիզմների կամ հավաքագրված տեղեկատվության վերլուծության ու կիրառման մեխանիզմների գնահատման գործընթացներ դեռևս առկա չեն:

ԱՊԷՔ-ը աշխատանքներ է տանում քոլեջի կայքում որոշակի տեղեկատվություն ապահովելու ուղղությամբ, սակայն դեռևս առկա չեն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության վերաբերյալ հրապարակումներ ու դրանց գնահատման մոտեցումներ, մինչդեռ այդ ուղղությամբ աշխատանքները կարող են հանգեցնել քոլեջի գործունեության թափանցիկության և կորպորատիվ հեղինակության ու տեսանելիության բարձրացման:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊԷՔ-ը դեռևս չի ապահովում երկարաժամկետ իրականանալի պլանավորում և առկա չեն ՌԾ նպատակների իրագործելիության երաշխիքներ, կարճաժամկետ պլանավորումները փոխկապակցված չեն երկարաժամկետ ՌԾ նպատակների հետ, նկատելի չէ ներքին շահակիցների ակտիվ ներգրավվածությունը իրենց վերաբերող որոշումների կայացմանը, ԱՊԷՔ-ի հիմնական գործընթացները դեռևս որակի կառավարման սկզբունքով չեն իրականացվում, նկատելի չեն որոշումների կայացման հիմքում

բազմակողմանի օբյեկտիվ հետազոտությունների առկայություն, դեռևս չեն ներդրվել քոլեջի հիմնական գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ, առկա չեն ՄԿԾ-ների որակի վերաբերյալ հրապարակումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԷՔ-ը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊԷՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է անբավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: Աբովյանի պետական էներգետիկական քոլեջն իրականացնում է ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան կրթական ծրագրեր, որոնք համահունչ են ՊԿՁ-երին: Քոլեջում իրականացնում են 7 միջին մասնագիտական և 1 նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերը՝

- Ջերմամատակարարում և ջերմատեխնիկական սարքավորումներ
- Ջերմաէլեկտրակայաններ
- Էլեկտրամատակարարում
- Էլեկտրահաղորդման գծերի տեղակայում և շահագործում
- Հաշվապահական հաշվառում
- Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում
- Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում
- Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում (ՆՄԿ):

2021թ.-ին լիազոր մարմնի կողմից փորձարարական կարգով ներդրել է «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիրը: Նոր մասնագիտության ներդրման համար քոլեջի կողմից առկա չեն շուկայի ուսումնասիրություններ և արտաքին շահակիցներից ստացված արձագանքներ: Նշված կրթական ծրագրի համար քոլեջն արդեն ստացել է լիցենզիա և նոր ուսումնական տարում ընդունելություն կիրականացնի հիմնական ընդհանուր կրթության հիմքով: Այս ուսումնական տարում քոլեջը կունենա տվյալ կրթական ծրագրի առաջին շրջանավարտները:

Դուալ ձևաչափով կրթություն քոլեջը չի իրականացնում: Այցից պարզ դարձավ, որ քոլեջի հեռակա բաժնում ընդունելություն չկա, դիմորդների բացակայությունը պարզաբանված չէ քոլեջի կողմից, դեռևս չեն նախատեվում քայլեր այդ ուղղությամբ: Քոլեջը չի իրականացնում կարճաժամկետ ծրագրեր և այս ուղղությամբ դեռև ծրագրեր չկան:

ԱՊԷՔ-ի դասախոսներից երեքը մասնակցել են «Էլեկտրամատակարարում» պետական կրթական չափորոշիչի վերանայմանը: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄԿԾ-երի ուսումնական պլանները վերանայվել են ՊԿՉ-ների վերանայմանը համահունչ և ՊԿՉ-ների տեղայնացման համատեքստում քոլեջը որևէ փոփոխություն չի իրականացրել: Այցից պարզ դարձավ, որ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության ուսումնական պլանը, ի տարբերություն միջին մասնագիտական կրթական ծրագրերի, առաջացրել է որոշակի դժվարություններ, պարբերաբար վերանայվել է. հիմնական խնդիրը եղել է այն, որ ուսանողները ցանկացել են մասնագիտական առարկաներն անցնել առաջին կուրսից, ուստի հանրակրթական առարկաները բաշխվել են երեք տարիների մեջ:

Բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ուսումնական պլաններում առկա են նաև առարկաներ, որոնք ներդրվել են ընտրովի և պահուստային ժամերի հաշվին: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսումնական պլանում առկա է «Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ» 72 ժամ տևողությամբ ընտրովի առարկան, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսումնական պլանում առկա է «Տեղական ինքնակառավարում» 70 ժամ տևողությամբ ընտրովի առարկան, իսկ մյուս 5 միջին մասնագիտական կրթական ծրագրերում առկա է «Ճարտարագիտական հոգեբանություն» 30 ժամ տևողությամբ ընտրովի առարկան, որոնք ներդրվել են առարկայական հանձնաժողովների և ուսումնական մասի քննարկումների արդյունքում՝ 2020թ-ին: Խորհրդատվությունների համար նախատեսված ժամերը քոլեջը չի օգտագործում: ՄԿԾ-երի ուսումնական պլաններում առկա են նախասիրական առարկաներ, սակայն առկա չեն ուսանողներիմասնակցության փաստեր: Ներքին շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ նրանց կողմից առաջարկվել է «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի ուսումնական պլանում ներդնել ընթացիկ քննություններ, սակայն առաջարկը չի կիրառվել: Կրթական ծրագրերում փոփոխություններ տեղի չեն ունեցել: Միայն փոփոխվել են այն դեպքերում, երբ ՄԿՈՒՀԱԿ-ը վերանայել է ՊԿՉ-ն: ՄԿԾ-երում փոփոխություններ չկան նաև գործատուների հետ հանդիպումներից: Փաստաթղթերի ուսումնասիրություններից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը փոփոխել է միայն կանոնակարգերը, որոնք ըստ իրենց նպաստել են աշխատանքային պարտականությունների, կարգապահական հմտությունների հստակեցմանը: Այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-երի ուղղությամբ որևէ վերլուծություն չի իրականացվել:

Քոլեջի ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական պրակտիկա և նախաավարտական /արտադրական/ պրակտիկա: «Էլեկտրամատակարարում», «Հաշվապահական հաշվառում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների ՊԿՁ-ներում, բացի նշվածներից, առկա է նաև մասնագիտական պրակտիկա, սակայն ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջն ուսումնական պլաններում չի ներառել մասնագիտական պրակտիկաները և չկա այն հիմնավորումներն ու վերլուծությունները, որոնց հիման վրա իրականացվել է մասնագիտական պրակտիկաների փոխարինումը՝ ուսումնականի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը գործատուների հետ համագործակցության շրջանակը ավելացրել է՝ 7-ից դարձնելով 10-ը: Հանդիպումներից պարզ դարձավ, որ «Հրազդան ՋԷԿ», «Երևան ՋԷԿ» և «ՀԵՑ» ընկերություններում ուսանողների պրակտիկաները կրում են էքսկուրսիոն բնույթ, ուսումնասիրում են տեղանքը, տեղեկանում անվտանգության կանոններին: Ուսանողները հանդես են գալիս դիտորդի կարգավիճակում: Պրակտիկայի բազաներ փորձագիտական այցերից պարզ դարձավ, որ հատկապես էներգետիկայի ոլորտի մասնագիտություններում, բոլոր կուրսերի ուսանողները միասին են այցելում պրակտիկայի բազա, չկա հստակ տարանջատում և կանոնակարգված մոտեցում ըստ կուրսերի: Պրակտիկայի բազաներ փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ այնտեղ, որտեղ որ պրակտիկա են անցնում քոլեջի ուսանողները, կարող են աշխատանքի անցնել 6-ամսյա դասընթացի արդյունքում, և քոլեջում համապատասխան մասնագիտություն ձեռք բերած շրջանավարտը որևէ առավելություն չուներ: Պրակտիկաների ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հատկապես էներգետիկայի ոլորտի մասնագիտություններում պրակտիկաների ծրագրերում ներառված թեմաները միտված չեն կարողությունների ձեռքբերմանը: Օրինակ, Ջերմաէլեկտրակայաններ մասնագիտության նախաավարտական /արտադրական/ պրակտիկայի ծրագրում ներառված են այնպիսի թեմաներ, որոնց ժամանակ ծանոթանում են որևէ սարքի աշխատանքին կամ սխեմային: Նաև պարզ դարձավ, որ ուսումնական պրակտիկաների ժամանակ քոլեջի վարժադաշտը չի օգտագործվում:

ՄԿԾ-երի նախաավարտական պրակտիկաների համար առկա են օրագրեր, սակայն և ուսումնական, և նախաավարտական պրակտիկաների դեպքում չկան գնահատման հստակ մեխանիզմներ և կանոնակարգված մոտեցումներ: Որոշ մասնագիտությունների դեպքում ուսանողներին տրվում է անհատական աշխատանք, սակայն դա իրենից ներկայացնում է որևէ թեմայի մասին 4-5 էջի սահմաններում գրվող ռեֆերատ աշխատանք:

Քոլեջն ունի «Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության, դրանց գնահատման և մշտադիտարկման» ընթացակարգ, որը հաստատվել է 2022թ-ին: Քոլեջի կողմից ներկայացված հավելվածում նշված են մոդուլների վերջնարդյունքների համար դասավանդման և ուսումնառության մեթոդներ: Ներկայացված դասավանդման մեթոդները հիմնականում երեքն են՝ դասախոսություն, քննարկում և թիմային աշխատանք, իսկ ուսումնառության մեթոդները հիմնականում հանձնարարված նյութի յուրացում, հանձնարարված գրականության ընթերցում,

մասնակցում խմբային քննարկումներին, էլեկտրոնային ուսումնական նյութերի կիրառում, ռեֆերատներ, մասնակցություն սեմինարներին, թեստերի կազում, գրավոր ստուգողական հանձնարարությունների կատարում: Վերոնշյալ մեթոդները դիտարկվող երեք ՄԿԾ-երում գրեթե ամբողջությամբ կրկնվում են, մասնագիտական մոդուլների դասավանդման ժամանակ դրանք իրարից գրեթե ոչնչով չեն տարբերվում: Այցից պարզ դարձավ, որ ըստ մասնագիտությունների և ըստ համապատասխան վերջնարդյունքների մեթոդներն ընտրելու և դրանց արդյունավետությունը որոշելու հստակ մեխանիզմներ չեն գործում: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ մեթոդների ընտրությունն անվելի շատ միտված էր տեսական գիտելիքների ձեռքբերմանը, բայց ոչ կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում դասախոսները ուշադրություն չեն հատկացնում ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացմանը: Չկան ստուգողական աշխատանքների կոնկրետ օրինակներ, թեստերում ներառված են հիմնականում տեսական բնույթի հարցեր, սեմինարների թեմաները կամ նպատակը հստակեցված չէ, ռեֆերատները հիմնականում իրենցից ներկայացնում են որևէ թեմայի վերաբերյալ 4-5 էջի սահմաններում տեսական նյութի շարադրում, որը երբեմն կրկնում է նաև իրենց ուսումնասիրած ուսումնառության նյութը: Ռեֆերատների համար չկա հստակ կառուցվածք, կատարման չափանիշներ և գնահատման մեխանիզմ: Նշվում է նաև անհատական աշխատանքների մասին, սակայն ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դրանք ոչնչով չեն տարբերվում ռեֆերատներից: Հանդիպումներից պարզ դարձավ, որ սլայդ-լսարանն օգտագործվում է միայն միջոցառումների ժամանակ:

Հանրակրթական առարկաների դեպքում ուսանողները նյութը ստանում են հիմնականում թելադրման միջոցով, իսկ արդեն մասնագիտական մոդուլների դեպքում տրվում են ուսումնառության նյութեր, իհարկե նաև որոշ դեպքերում նյութը տրվում է թելադրության միջոցով: Քոլեջում շեշտադրված է տեսական ուսուցումը, ուսանողների մոտ նկատվում է գործնական դասաժամերի և պրակտիկ կարողությունների պակաս: Առաջադրանքների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հանձնարարականները ընդհանուր առմամբ ձևավորում են տեսական գիտելիքներ, իսկ գործնական կարողություններ և հմտություններ՝ ավելի քիչ: Հարկ է նշել, որ կային նաև լավ փորձի օրինակներ: Որոշ դասերի ժամանակ օգտագործում են պաստառներ, տեսանյութեր /հիմնականում ռուսերենով/: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տեսանյութեր կիրառում էին, սակայն դիտում էին հեռախոսով: «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությունում առկա էին ֆինանսական հաշվառման վերաբերյալ անհատական աշխատանքի առաջադրանքներ, բիզնես պլանի կազմման օրինակներ, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունում կայք էջերի պատրաստման օրինակներ:

Քոլեջն ունի 2013թ.-ին հաստատված «Քոլեջի միջնակարգ մասնագիտական կրթական ծրագրի ուսանողների գիտելիքների գնահատման» կանոնակարգ: Մոդուլային ծրագրերում նշված են կատարման չափանիշները և յուրաքանչյուր արդյունքի համար գնահատման մեթոդը:

Կանոնակարգում նշված չէ, թե ինչպես է կատարվում ուսանողի գնահատականի բողոքարկումը կամ վերանայումը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ գնահատականի բողոքարկման դեպքում ուսանողները կարող են ողջ ուսումնառության ընթացքում 3 անգամ փոխել դրական գնահատականը՝ վերահանձնել, համապատասխան ուղեգրով: Գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը գնահատելիս կարևորում է ուսանողի կողմից դասի տեսական մասի վերարտադրումը, որոշ մասնագիտությունների դեպքում՝ նաև խնդիրների լուծումը, հանձնարարված ռեֆերատները, անհատական աշխատանքները, սակայն հստակ մեխանիզմներ առկա չեն:

ԱՊԷՔ-ն ունի «Ավարտական եզրափակիչ քննությունների և դիպլոմային նախագծերի /աշխատանքների/ պաշտպանության» կարգ: Բոլոր կրթական ծրագրերում ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ քննություններ: Ամփոփիչ հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում հիմնականում առկա են տեսական գիտելիքները ստուգող հարցեր, որոշ մասնագիտություններում, օրինակ «Հաշվապահական հաշվառում», կան նաև գործնական առաջադրանք:

Ուսումնասիրելով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունները, պարզվեց, որ պարբերաբար առաջարկվել է քննական տոմսերը կազմելիս ներառել գործնական, կիրառական բնույթի առաջադրանքներ: Նման դիտարկում առկա է բոլոր մասնագիտությունների պարագայում, սակայն դրանք դեռևս քոլեջի կողմից չեն կիրառվել: Քոլեջում ուսանողները քննություն են տալիս առաջին կուրսում հանրակրթական առարկաներից՝ Հայոց պատմություն, Հանրահաշիվ և Ֆիզիկա, ընդ որում Հանրահաշիվ և Ֆիզիկա առարկաների քննական տոմսերում ներառված է ընդամենը մեկ խնդիր, իսկ մնացած հարցերը տեսական բնույթի են: Այլ ընթացիկ քննություններ ուսումնական պլաններում ներառված չեն, ինչպես նաև կուրսային և դիպլոմային /ավարտական/ աշխատանքներ:

Մոդուլային ծրագրերում ներկայացված է յուրաքանչյուր արդյունքի գնահատման ձևը, որը կարող է լինել հարց ու պատասխանի, թեստային առաջադրանքի կամ գործնական վարժություններ տեսքով: Գնահատման թերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար առանձնացված են բանավոր հարցեր և տրվում է գործնական առաջադրանք:

Ուսանողները ուսումնական պրակտիկայի ժամանակ գնահատվում են 10 բալային համակարգով /տարբերակված ստուգարք/: Ուսումնական պրակտիկայի համար պրակտիկայի օրագիր առկա չէ: Նախաավարտական պրակտիկան գնահատվում է գործատուի կողմից՝ անբավարար, բավարար, լավ կամ գերազանց: Նախաավարտական պրակտիկայի համար առկա է պրակտիկայի օրագիր: Գնահատականներն արտահայտված են պրակտիկայի օրագրերում, սակայն որպես մեխանիզմ այն չի գործում, պրակտիկայի գնահատման չափանիշներ սահմանված չեն:

ԱՊԷՔ-ը կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացրել, մշտադիտարկման և բենչմարքինգի իրականացման կարգ առկա է, սակայն այն չի կիրառվել ու դեռևս առկա չեն

կիրառման նախադրյալներ: «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության կրթական ծրագրի շրջանակներում համագործակցություն է իրականացվում Սևանի քոլեջի հետ, փորձի փոխանակում է տեղի ունենում դասախոսների ուղղությամբ, քայլեր են ձեռնարկվում Ջի Այ Զեթի հետ համագործակցություն ձեռք բերելու համար:

Քոլեջն ունի ՄԿԾ-երի մշտադիտարկման կանոնակարգ՝ «Կրթական ծրագրերի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր» և «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման կարգ», սակայն դեռևս քոլեջի կողմից դրանց իրականացման համար քայլեր չեն ձեռնարկվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-երի փոփոխությունների վերաբերյալ տեղի են ունենում միայն որոշակի քննարկումներ: Կան որոշակի մեխանիզմներ, որոնց միջոցով փորձում են գնահատել կրթական ծրագրերի արդյունավետությունը: Դրանք են հարցումները և դասալսումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումներն իրականացնում է Որակի ապահովման պատասխանատուն, իսկ դասալսումները հիմնականում իրականացնում են առարկայական հանձնաժողովների նախագահները և Որակի ապահովման պատասխանատուն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների ընթացքում ի հայտ եկած հիմնական խնդիրներն են եղել ոչ օբյեկտիվ գնահատումը, ուսումնառության նյութի ծավալը, ակտիվացման և խրախուսման մեթոդների պակասը: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հարցումներից հետո չկան կատարված բարեփոխումների կոնկրետ օրինակներ, իսկ դասալսումների վերլուծություններում նշվել են հիմնական խնդիրները, սակայն այդ ուղղությամբ նույնպես քոլեջը չի ձեռնարկել կոնկրետ գործողություններ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում իրականացվող կրթական ծրագրերը համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին: Դրական է գնահատում, որ քոլեջի դասախոսները ՄԿՈՒԶԱԿ-ում մասնակցել են «Էլեկտրամատակարարում» ՄԿԾ-ի մշակման ու վերանայման գործընթացին, ինչը ցույց է տալիս, որ քոլեջը՝ լինելով էներգետիկայի ոլորտի միակ քոլեջը, որոշակի քայլեր է ձեռնարկում ոլորտի չափորոշիչների վրա ազդեցություն ունենալու համար: Փորձագիտական խմբի կարծիքով քոլեջի համար նպաստավոր փաստ է փորձարարական կարգով ներդրված «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիրը, որը կնպաստի աշխատաշուկայում մրցակցության մեծացմանը, հնարավորություն կստեղծի քոլեջի համար նոր ծրագրերի ներդրմանը: Սակայն մտահոգիչ է, որ իրականացվող մասնագիտությունների ուղղությամբ չկան շուկայի ուսումնասիրություններ և արտաքին շահակիցներից ստացած արձագանքներ: Լինելով էներգետիկայի ոլորտում միակ քոլեջը, պատրաստում է էներգետիկ ոլորտի մասնագետներ, ովքեր պրակտիկ կարողությունների խնդիր ունեն: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ ՊԿՁ-երի տեղայնացման համատեքստում քոլեջի կողմից չեն իրականացվում ուսումնասիրություններ ՄԿԾ-երի լավարկման ուղղությամբ:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջը չունի հեռակա բաժնում դիմորդներ, ինչպես նաև քայլեր չի ձեռնարկում կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը ունի բավարար ռեսուրսային պայմաններ կարճաժամկետ ծրագրեր ներդնելու համար, որոնք քոլեջի համար ֆինանսական ռեսուրսների այլընտրանք կարող են լինել: Սակայն փորձագիտական խումբը մտահոգ է, որ քոլեջը քայլեր չի ձեռնարկում հեռակա բաժնում դիմորդներ ներգրավելու համար, ինչը նվազեցնում է քոլեջի դերը աշխատաշուկայում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄԿԾ-երում ընտրովի առարկաների առկայությունը, սակայն մտահոգիչ է, որ այդ առարկաները ներդրվել են 2020թ.-ին և մինչև այժմ չի իրականացվել դրանց արդյունավետության գնահատում:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ բոլոր ՄԿԾ-երի ուսումնական պլաններում առկա են նախասիրական առարկաներ և խորհրդատվությունների համար նախատեսված ժամեր, սակայն մտահոգիչ է, որ դրանք չեն օգտագործվում, մինչդեռ դրանց արդյունավետ կիրառումը շատ կարևոր է հաշվի առնելու ուսանողների և գործատուների կարծիքները, որոնք կապահովեն քոլեջի ՄԿԾ-ների բարելավումը:

Անհանգստացնող է այն փաստը, որ ուսումնական պլաններում առկա չեն մասնագիտական պրակտիկաներ, չկան կանոնակարգված մոտեցումներ պրակտիկաները տարանջատելու, ըստ մոդուլների դրանք բաշխելու համար, ինչը կարող է վտանգել պրակտիկայի արդյունավետությունը, ուսանողի մոտ չձևավորել մասնագիտության զբաղմունքի նկարագիրով սահմանված կարողություններն ու հմտությունները:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում նաև այն փաստը, որ ոչ մասնագիտական մոդուլների համար նախատեսված են ուսումնական պրակտիկաներ և չկա նաև հիմնավորում նշվածի վերաբերյալ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ գործատուների թիվը 7-ից դարձել է 10-ը, քոլեջը կարողացել է որոշակի չափով ընդլայնել պրակտիկաների բազաները, սակայն մտահոգիչ է, որ ուսանողները պրակտիկաների բազաներում ունեն դիտորդի կարգավիճակ, պրակտիկաները կրում են էքսկուրսիոն բնույթ, բացակայում է պրակտիկ փորձի կիրառումը, ինչը հանգեցնում է շրջանավարտների հմտությունների և կարողությունների ոչ լիարժեք ձեռքբերմանը: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը ունենալով ուսումնական վարժադաշտ, այն չի կիրառում պրակտիկաների ժամանակ, որը կապահովեր ուսանողների պրակտիկ գործունեությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ պրակտիկաների արդյունավետ կազմակերպման և իրականացման տեսանկյունից քոլեջն աշխատանքներ ունի իրականացնելու, որի արդյունքում կբարելավվեն ուսանողների կարողություններն ու հմտությունները, ինչն էլ կնպաստի ուսանողների մրցակցության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն ունի «Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության, դրանց գնահատման և մշտադիտարկման» ընթացակարգ, սակայն մտահոգիչ է համարում, որ բոլոր ուսումնառության արդյունքների ձեռքբերման համար սահմանվել են միևնույն դասավանդման և ուսումնառության մեթոդները:

Փորձագիտական խումբը նշում է, որ մասնագիտությունների առանձնահատկությունները հաշվի առնող և ըստ համապատասխան վերջնաարդյունքների մեթոդներն ընտրելու և դրանց արդյունավետությունն որոշելու հստակ մեխանիզմներ չեն գործում, կրթական ծրագրով նախատեսված ուսումնառության արդյունքները երաշխավորող հստակ քաղաքականություն և մեխանիզմներ բացակայում են: Փորձագիտական խումբը նշում է, որ առկա է դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների և ակնկալվող արդյունքների կապի խզում: Փորձագիտական խումբը գտնում է, որ ըստ վերջնաարդյունքների նպատակահարմար է տարանջատել ուսումնառության և դասավանդման մեթոդները, յուրաքանչյուր մոդուլի համար առանձնացնել տեսական և գործնական ուսուցման համար անհրաժեշտ առաջադրանքներ, որոնք կարող են օժանդակել արդյունավետ դասավանդմանը և նպաստել կրթական ծրագրերի վերջնաարդյունքների ձեռքբերմանը: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ դասավանդման ընթացքում չի կարևորվում ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացումը, քոլեջում շեշտադրված է տեսական ուսուցումը, նկատվում է գործնական դասաժամերի և պրակտիկ կարողությունների պակաս, որի իրականացումը կարող է խթան հանդիսանալ աշխատաշուկայում շրջանավարտների պահանջված լինելուն: Փորձագիտական խումբը նշում է, որ գործնական և լաբորատոր դասերի, տեսանյութերի կիրառումը կարևոր կլինի կրթական ծրագրերի արդյունքների ապահովման հարցում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի «Քոլեջի միջնակարգ մասնագիտական կրթական ծրագրի ուսանողների գիտելիքների գնահատման» կանոնակարգ և «Ավարտական եզրափակիչ քննությունների և դիպլոմային նախագծերի /աշխատանքների/ պաշտպանության» կարգ, սակայն փորձագիտական խումբը մտահոգ է, որ սահմանված չեն ընթացիկ գնահատման չափանիշներ, առկա է գնահատման մեխանիզմների անկատարություն, պետական ամփոփիչ ատեստավորման քննական տոմսերում հիմնականում ներառված են տեսական հարցեր, դիպլոմային նախագծեր չեն կիրառվում: Փորձագիտական խումբը նշում է, որ թեև առկա է պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններով ներկայացվող խնդիրներ, սակայն մտահոգ է, որ քոլեջը ընթացք չի տվել նրանց արձագանքին՝ քննական տոմսերում դեռևս չեն ներառել գործնական, կիրառական բնույթի առաջադրանքներ: Միաժամանակ քոլեջը ընթացք չի տվել նաև դասախոսների առաջարկին՝ ուսումնական պլաններում ընթացիկ քննություններ ներառելու վերաբերյալ: Փորձագիտական խումբը մտահոգ է, որ ուսումնական պլաններում ներառված չեն կուրսային աշխատանքներ, դիպլոմային /ավարտական/ աշխատանքներ: Փորձագիտական խումբը նշում է, որ չկան նաև գիտելիքի գնահատման արդյունքի բողոքարկման հստակ մեխանիզմներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը գործուն քայլեր պետք է իրականացնի գնահատման գործընթացը բարելավելու ուղղությամբ՝ նկատի ունենալով նաև պրակտիկաների գնահատման մեխանիզմները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության կրթական ծրագրի շրջանակներում համագործակցություն է իրականացվել Սևանի քոլեջի հետ, քայլեր են

ձեռնարկվում Ջի Այ Զեթի հետ համագործակցություն ձեռք բերելու համար, ինչը հնարավորություն կտա այնտեղի լավ փորձը բերել քոլեջ, և բարձրացնել կրթական ծրագրի գրավչությունը, սակայն մտահոգ է, որ կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացրել,

Փորձագիտական խումբը նշում է, որ չնայած քոլեջն ունի ՄԿԾ-երի մշտադիտարկման կանոնակարգ՝ «Կրթական ծրագրերի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր» և «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման կարգ», սակայն մտահոգ է, որ դեռևս քոլեջի կողմից դրանց իրականացումը պարտադիր պահանջ չի համարվում և այդ ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկում, որը կապահովեր ՄԿԾ-ի արդյունավետ գնահատումն ու լավարկումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊԷՔ-ը լինելով էներգետիկայի ոլորտում միակ քոլեջը խնդիր ունի ոլորտի համար պրակտիկ մասնագետների պատրաստմանն և աշխատաշուկայի սպասարկմանը, առկա չեն ուսումնասիրություններ ՄԿԾ-երը լավարկելու ուղղությամբ, չկան պրակտիկաներն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու հստակ մեխանիզմներ, առկա է դասավանդման և գնահատման մեխանիզմների անկատարություն, գործընթացները չեն ապահովում ուսանողակենտրոն ուսուցում, հանձնարարականները չեն զարգացնում ուսանողների ստեղծագործական և հետազոտական միտքը, առկա է գործնական դասաժամերի և պրակտիկ կարողությունների պակաս, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԷՔ-ը չի բավարարում չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊԷՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է անբավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: ԱՊԷՔ-ում ընդունելությունը իրականացվում է ՀՀ ԿԳՄՍՆ հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության» կարգի համաձայն՝ առցանց dimord.emis.am կայքի միջոցով: Անհրաժեշտ փաստաթղթերի մասին տեղեկատվությունը դիմորդներին նախօրոք Քոլեջը հայտնում է դիմորդներին ֆեյսբուքյան էջում ընդունելության մասին հայտարարություններ տեղադրելով:

Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դիմորդները ընդունելության ժամանակ լրացնում են կարիերայի ուղղորդման պատասխանատուի կողմից մշակված «Դիմորդի հարցաշարը», որի նպատակն է պարզելու, թե ինչու են դիմորդներն ընտրել ԱՊԷՔ-ը, որտեղից են տեղեկացել քոլեջի մասին, ինչպես են կայացրել իրենց մասնագիտության

ընտրությունը, նաև պարզել կարիերայի ուղղորդման պատասխանատուի դերը դիմորդների մասնագիտության ընտրության հարցում:

Դիմորդների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման նպատակով քոլեջն ունի սահմանված գործողությունների պլան՝ որի իրականացման համար պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, կարիերայի պատասխանատուն, ՈԱԿ պատասխանատուն, գրադարանավարը: Դիմորդների մասնագիտական կողմնորոշման և հավաքագրման աշխատանքները սկսվում են ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից մինչև ընդունելության ավարտը: Կազմակերպվում և իրականացվում են շրջայցեր դպրոցներ, բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպվում են ճանաչողական այցեր դեպի Քոլեջ՝ իրականացնելով բաց դռների օրեր աշակերտների, ծնողների համար, կազմակերպում հանդիպումներ քոլեջի գործատուների հետ: Իրականացված աշխատանքների մասին պատրաստվում են նյութեր, հրապարակվում ֆեյսբուքյան էջում: Քոլեջն ունի բուկլետներ, հայտարարությունների տախտակ, որոնք պարունակում են տեղեկատվություն քոլեջի մասնագիտությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, ներքին և արտաքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում քոլեջի մասին իմացել են իրենց ընկերների, հարազատների միջոցով:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի դինամիկ աճ է նկատվում հատկապես Հաշվապահական հաշվառում, Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, Արևային էներգիայի մասնագիտությունների գծով, որը, ըստ քոլեջի ներկայացուցիչների, պայմանավորված է մասնագիտությունների արդիականացմամբ և պահանջարկով: Ըստ քոլեջի ինքնավերլուծության՝ քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում և ԱՊԷՔ-ում կրթություն է ստանում 252 ուսանող /2022-2023 ուսումնական տարվա տվյալներ են ներկայացվել/, իսկ ըստ փորձագիտական այցի քոլեջում այդ ընթացքում սովորում են մոտ 338 ուսանող, հեռակա բաժնում սովորողներ չկան:

Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են հանդիսացել բացակայությունները, որոնք բերել են հեռացումների քանակի ավելացման: Քոլեջի ղեկավար կազմը խնդրի լուծման համար կազմակերպել և իրականացրել է հանդիպումներ ուսանողների հետ, որի արդյունքում որոշում է կայացվել կատարել փոփոխություն՝ բարձրացնելով բացակայությունների թույլատրելի շեմը՝ 140-ից դարձնելով 200: Թերևս, բացակայությունների նվազման միտում նկատելի չէ:

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է որակի ապահովման կենտրոնի և կարիերայի կենտրոնի միջոցով: Քոլեջն ունի «Ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն», ըստ որի քոլեջում սովորողների կարիքների բացահայտման օղակ են հանդիսանում կուրսղեկները, ուսումնական մասը, ղեկավար անձնակազմը և ուսանողական խորհուրդը: Ուսումնական գործընթացի հետ

կապված կարիքները սովորողը կարող է վերհանել կուրսղեկի և ուսումնական մասի միջոցով: Ընդհանուր իրավունքների հետ կապված կարիքները սովորողը կարող է վերհանել ուսանողական խորհրդի միջոցով: Կարիերայի զարգացման և ուսման շարունակման հետ կապված կարիքները սովորողը կարող է վերհանել մասնագիտական առարկայական ցիկլերում, կարիերայի զարգացման և խորհրդատվության կենտրոնում: Որպես ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ են դիտարկվում հարցումները: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ուսանողների կարքների վերհանման գործընթացը հիմանականում բարձրացրել է բուֆետի, ջեռուցման և համակարգիչների խնդիրները, քոլեջի տնօրենության հետ հաճախակի հանդիպումների կազմակերպման անհրաժեշտություն, ուսումնական նյութերի ծավալի և գործնական աշխատանքների վերաբերյալ: Սակայն դեռևս տեսանելի չէ կապը վերհանված կարիքների և բարելավման նախատեսված գործողությունների միջև:

Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց: Հանդիպումներից պարզ դարձավ, որ խորհրդատվությունները հիմանականում իրականացվում են ուսումնական պրակտիկաների ժամանակ և ուսանողներն իրենց անհասկանալի հարցերն ուղղում են տվյալ դասախոսին: Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ քոլեջում չեն իրականացվում, սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական հանդիպումներից, ըստ անհրաժեշտության՝ դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին, պատասխանելու նրանց բոլոր հարցերին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով: Քոլեջում առկա է վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակցույց, սակայն ուսանողները ցանկացած պահի կարող են դիմել տնօրենին, ուսումնական մասի ղեկավարին, կարիերայի ուղղորդման պատասխանատուին և այլն: Քոլեջը հարցումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարավածությունը, ըստ որի ուսանողների 96%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 82%-ը բավարարված է այդ ծառայություններից: Միաժամանակ փորձագիտական այցից պարզվեց, որ ուսանողները իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններն հիմնականում ստանում են կուրսղեկների միջոցով:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է կարիերայի ստորաբաժանում:

Կարիերայի ստորաբաժանումը կազմակերպում և իրականացնում է ուսանողների ինքնագնահատման ու ինքնաբացահայտման գործունեություն: Տրամադրում է տեղեկատվություն քոլեջի ուսումնառության գործընթացի, շարժունության, լրացուցիչ և շարունական կրթության և ուսուցման հնարավորությունների ու նմանատիպ այլ ծրագրերի մասին, աշխատաշուկայում առկա և կանխատեսելի թափուր աշխատատեղերի,

գործատուների կողմից ներկայացվող հիմնական պահանջների, հաստատության հետ համագործակցող ձեռնարկությունների վերաբերյալ: Կազմակերպում է այցելություններ ՀՀ բուհեր (ՀՊՏՀ, ՀԱՊՀ) գործատուների հետ, քոլեջի ուսանողները մասնակցում են ԷՔՍՊՈ-ների:

Այցից պարզ դարձավ, որ Քոլեջը դեռևս չունի կնքված համաձայնագրեր հաստատությունների հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ, սակայն Կարիերայի կենտրոնի միջոցով նրանք տեղեկանում են գործատուներից եկող պահանջարկին և եղել են դեպքեր, որ շրջանավարտներն ընդունվել են աշխատանքի: Կարիերայի պատասխանատուն պարբերաբար թափուր աշխատատեղերի վերաբերյալ իրազեկում է շրջանավարտներին, այդ թվում նաև քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Այցից պարզ դարձավ, որ վերջին շրջանում 2 ուսանող գործատուների մոտ ընդուվել են աշխատանքի:

Կարիերայի պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները, որոնք աշխատանքի են անցել կարերայի պատասխանատուի օժանդակությամբ: 2022-2023 ուսումնական տարվա շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 72 շրջանավարտներից 20-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 28-ը աշխատում են, որից 10-ը իրենց մասնագիտությամբ: Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքում է գտնվում «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նոր է ստեղծել շրջանավարտների բազա:

Ուսանողական խորհուրդը իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան միջոցառումների պլանում՝ նշելով նախատեսված միջոցառումների մասնակիցներին, կատարման ժամկետները և պատասխանատուներին: ՈՒԽ-ն քննարկում և պլանավորում է նիստեր, որոնք իրականացնում են ամիսը մեկ անգամ և արձանագրվում են: Ներքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն որպես կառույց հիմնականում իրականացնում է մշակութային գործունեություն: Հիմնականում ՈՒԽ-ի կողմից կազմակերպվում և իրականացվում են միջոցառումներ, բաց դասեր: ՈՒԽ-ն համակարգում է քոլեջի կայք էջը, տեղադրում է տեղեկատվություն:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր ևս քննարկվել են: ՈՒԽ-ն ունի նախագահ, երկու փոխնախագահներ՝ ուսումնական գծով և դաստիարակչական գծով, ունի նաև բողոքի հանձնաժողովի նախագահ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ եղել են բողոքի դեպքեր, բողոքի հանձնաժողովի կողմից դրանք քննարկվել են, և խնդիրը լուծվել է: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Ուսանողական խորհրդի աշխատանքների իրազեկման մասին միջոցառումները սակավ են:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը

գնահատվում է հարցումների միջոցով, իրականացվում են նաև ռեսուրսների բավարարվածության մասին հարցումներ, որոնք հիմնականում քանակական տվյալների դուրսբերմամբ են ամփոփվում: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են ուսումնական մասնաշենքի նորոգմանը, ջեռուցմանը, ճաշարանի շահագործմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում կանոնակարգված են ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմները, ինչը նպաստում է ուսանողների ընդհանուր թվաքանակի կայունությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ դիմորդները ընդունելության ժամանակ լրացնում են կարիերայի ուղղորդման պատասխանատուի կողմից մշակված «Դիմորդի հարցաշարը»: Փորձագիտական խումբը գտնում է, որ հարցումների վերլուծությունները հնարավորություն կտան քոլեջին ավելի հստակ պլանավորել հաջորդ տարվա անելիքները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ որոշ մասնագիտությունների գծով նկատվում է դիմորդների թվի դինամիկ աճ, սակայն մտահոգ է, որ հատկապես էներգետիկայի ոլորտի մասնագիտություններում նկատվում է դիմորդների թվի պակաս, ինչը կարող է վտանգել կրթական ծրագրերի արդյունավետությունը:

Փորձագիտական խումբի համար մտահոգիչ է, որ բացակայությունների թվի շեմը քոլեջում բարձրացել է և կարծում է, որ այս խնդրի լուծման համար ավելի խորը պատճառներ կան: Բացակայությունների պատճառներ կարող են հանդիսանալ՝ ուսումնական պլանների ոչ գրավիչ լինելը, ուսանողների մոտիվացիայի պակասը, և այլ խնդիրներ, որոնց լուծումը ղեկավար կազմի կողմից կհանգեցնի բացակայությունների թվի նվազեցմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն, սակայն շեշտադրում է ուսանողների կրթական կարիքների շարունակաբար և պարբերաբար վերհանման անհրաժեշտությունը, ինչը թույլ կտա քոլեջին վերհանված կրթական կարիքների միջոցով բարելավել ՄԿԾ-երը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին, որը կարող է նպստել ուսանողների առաջընթացին:

Փորձագիտական խումբը կարևորում է կարիերայի կենտրոնի դերը քոլեջում, հատկապես ուսանողներին աշխատաշուկա նախապատրաստելու և ուղղորդելու գործում: Դրական է, որ կարիերայի կենտրոնը սկսել է հավաքագրել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալներ և ստեղծել շրջանավարտների բազա: Փորձագիտական խումբը գտնում է, որ բազայի ստեղծումը թույլ կտա ապահովել շրջանավարտների հետ հետադարձ կապը, վերհանել նրանց կարիքները, ինչի արդյունքում համապատասխան քննարկումները ստորաբաժանումների և առարկայական հանձնաժողովների հետ հնարավորություն կտա լավարկել կրթական ծրագրերը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ուսանողների կարիքների վերհանման մեկ այլ մեխանիզմ է դիտարկում ՈւԽ-ն: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՈւԽ-ի դերի հստակեցումը, իրավունքների պաշտպանության և կարիքների վերհանմանն ուղղված գործընթացների իրականացումը կարող է ավելի բարելավել ուսանողների կրթական միջավայրը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում առկա է նաև այլ ծառայությունների արդյունավետությունը գնահատող հարցումներ: Փորձագիտական խումբը նշում է, որ այդ հարցումների վերլուծության արդյունքում քոլեջը հնարավորություն կունենա ուսումնական միջավայրը դարձնել ավելի գրա վիչ և շարունակաբար ընդլայնել դիմորդների հոսքը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում է ուսանողների հավաքագրման և ընդունելության կանոնակարգված մեխանիզմներ, առկա է ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ, ուսանողներին տրվում է համապատասխան աջակցություն և խորհրդատվություն, առկա է ՈւԽ, կարիերային նպաստող ծառայություններ, այլ ծառայությունների արդյունավետությունը գնահատող հարցումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԷՔ-ը բավարարում չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊԷՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Ըստ ԱՊԷՔ-ի 2023-2028թթ. ՌԾ-ի՝ Քոլեջն իր առջև հիմնախնդիր է դրել շարունակել բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումը՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր, ինչպես նաև բարձրացնել քոլեջի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը: Սահմանված նպատակի իրագործման համար ՌԾ-ում սահմանվել է միայն կարճաժամկետ դասընթացների և վերապատրաստումների կազմակերպում /12-րդ կետ/ քայլը դասախոսների համար:

ԱՊԷՔ-ի դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի ընտրությունն իրականացվում է՝ ըստ «Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականության», որը կազմվել է ՀՀ Աշխատանքային

օրենսգրքի, «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների հիման վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր աշխատատեղի առկայության դեպքում կազմում են հայտարարություն և հրապարակում «Կրթություն շաբաթաթերթում» կամ տեղեկատվական կայքերում, ինչպես նաև դիմում են Աբովյան քաղաքի զբաղվածության տարածքային կենտրոն: Դասախոսական կազմը աշխատանքի է ընդունվում մրցույթային կարգով, իսկ ուսումնաօժանդակ կազմի համար մրցութային ընթացակարգ առկա չէ, ընդունվում են առանց մրցույթի՝ ըստ առկա պահանջի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մինչ այժմ մրցույթային կարգով 6 թեկնածու է մասնակցել, ընդ որում մեկ մասնագիտության գծով երկու և ավել թեկնածուներ չեն եղել: Մրցույթի ընթացքում տեղի է ունենում բանավոր հարցազրույց թեկնածուի հետ, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս քոլեջը գործատու-դասախոսներ չունի, շրջանավարտ-դասախոսներն էլ՝ 4-ն են:

Փաստաթղթերի ուսումնսիրությունից և այցից պարզ դարձավ, որ դասախոսների առջև ըստ կրթական ծրագրերի չկան դրված հստակ պահանջներ: Առկա է բոլոր ՄԿԾ-երի համար մեկ միասնական ձևաչափ՝ «Դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ըստ ՄԿԾ-ի» պաշտոնի նկարագիրը, որտեղ ներկայացվում է խնդիրների բնագավառը և աշխատանքային գործառույթները, պատասխանատվությունը և բարդության աստիճանը, աշխատանքային գիտելիքները և կարողությունները, լրացուցիչ գիտելիքները և կարողությունները, բազային մասնագիտության ոլորտը և որակավորման մակարդակը: Քոլեջում դասավանդում է 41 դասախոս, նրանցից 2-ը՝ համատեղությամբ: Համատեղությամբ աշխատող դասախոսներից մեկը վարպետ է, և դասավանդում է ՆՄԿ-ում: Բոլոր դասախոսներն ունեն բարձրագույն կրթություն: Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասավանդողների ծանրաբեռնվածությունը կազմում է 3-13 մոդուլ: Հատկապես էներգետիկական ոլորտի մասնագիտություններում մեկ դասախոսի բեռնվածությունը կազմված է է 10 և ավելի մասնագիտական մոդուլներից:

2020 թ.-ին քոլեջում հաստատվել է «Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգերը, մեխանիզմները և գործիքները»՝ համաձայն որի դասավանդման որակի գնահատման մեխանիզմներն են՝ դասավանդման որակի գնահատման ընթացակարգերը հիմնված են սոցիոլոգիական հարցումների /ուսանողների անկետավորում/ և այլ մեթոդների վրա, դասավանդման որակի գնահատման հիմնական ձևերն են՝ հարցումները, անկետավորումը, փաստաթղթերի ուսումնասիրությունը և վերլուծությունը, մշտադիտարկումը, դասավանդման որակի գնահատման մեթոդները գնահատման համակարգի կարևոր տարրերից մեկն է:

Գնահատման նպատակներից կախված՝ դրանք կատարվում են հետևյալ մեթոդներով՝ գնահատման համար ինֆորմացիայի հավաքագրում /հարցումներ, անկետավորում, փաստաթղթերի վերլուծություն/, ինֆորմացիայի մշակում և գնահատում, գնահատման արդյունքների ներկայացում և հավաքագրում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում որպես դասախոսական կազմի գնահատման մեխանիզմ է դասալսումները, փոխադարձ և կրկնակի դասալսումները, որոնք իրականացվում են յուրաքանչյուր կիսամյակը1 անգամ: Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների ու հմտությունների գնահատման մյուս մեխանիզմն ուսանողների շրջանում իրականացված հարցումներն են, որոնք իրականացվում են Կրթության Որակի ապահովման պատասխանատուի կողմից: Քոլեջն ունի նաև դասալսումների և փոխադարձ դասալսումների ժամանակացույց, դասալսումների անցկացման ձևաթուղթ: Դասալսումները հիմնականում իրականացնում են առարկայական հանձնաժողովների նախագահները և Որակի ապահովման կենտրոնը: Փոխադարձ դասալսումների արդյունքները ձևաթղթում չեն լրացվում, դասալսումից հետո տեղի է ունենում քննարկում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվում են փոխադարձ դասալսումներ հատկապես սկսնակ դասախոսների համար՝ ներքին լավ փորձը տարածելու նպատակով: Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների հետ, նշվում են դրական կողմերը, թերությունները, դիտողությունները և արվում են առաջարկություններ, հետևություններ: Ուսումնական տարվա ավարտին, ելնելով կատարված դասալսումների արդյունքներից, առարկայական հանձնաժողովների նախագահները իրականացնում են դասալսումների վերլուծություններ, որտեղ նշում են դասալսումների արդյունքում ի հայտ եկած թերություններն ու առավելությունները: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հիմնական թերությունները կապված են եղել գնահատման համակարգի, ուսումնառության նյութի ծավալի, ուսանողներին ակտիվացնելու մեթոդների բացակայության հետ: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ի հայտ եկած թերությունների շտկման կամ բարելավման ուղղությամբ կոնկրետ գործողություններ չկան կատարված, հիմնական գործողությունները քննարկումներն ու զրույցներն են կամ կրկնակի դասալսումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքոլեջային փորձի փոխանակման միջոցառումները հստակ պլանավորված և կանոնակարգված չեն:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ԱՊԷՔ-ը ֆինանսական միջոցներ է հատկացրել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար: Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին, որոնք պլանային են: Սակայն կան նաև եզակի դեպքեր (վերջին 5 տարիներին՝ 4 դասախոս), երբ դասախոսները մասնակցել են մասնագիտական դասընթացների թե՛ քոլեջի և թե՛ անձնական ֆինանսավորմամբ: Էներգետիկայի ոլորտի երկու դասախոս 2024թ.-ին մասնակցել են «Արդյունաբերական համակարգերի

ավտոմատացման բազային գիտելիքներ (Robot - 00)» մեկշաբաթյա դասընթացին, իսկ երկու դասախոս էլ՝ 2022թ.-ին «Փափուկ հմտությունների առցանց դասընթաց ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների դասախոսական անձնակազմի համար» դասընթացին: Սակայն շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ վերապատրաստումներից հետո քոլեջում փորձի տարածումտեղի չի ունեցել:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում չունի: Քոլեջում սերընդափոխությունը դանդաղ է ընթանում: Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը կազմում է մոտավորապես 52 տարեկան: Թեև քոլեջն ունի «Դասախոսական կազմի ներգրավման և կայունության ապահովման ընթացակարգ», սակայն դասախոսական կազմի ներգրավման համար կոնկրետ քայլեր չեն ձեռնարկվում: Քոլեջը ունի լաբորատորիաներ, սակայն չունի լաբորանտներ: Այցից պարզ դարձավ,որ քոլեջը դեռևս քայլեր չի ձեռնարկվում նաև պրակտիկ ոլորտի դասախոսներ ներգրավվելու ուղղությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջ-գործատու համագործակցությունը ճկուն չէ, քոլեջը տեսնում է պրակտիկ ոլորտի դասախոսների կարիք, սակայն ցածր աշխատավարձով և ոչ ճկուն պլանավորումներով պայմանավորված մասնագետները խուսափում են քոլեջում աշխատելուց, մյուս կողմից՝ քոլեջը խնդիր է տեսնում դասացուցակը կազմելուև տեղաշարժելու տեսանկյունից:

Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցները իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում: Բոլոր հաստիքային վարչական աշխատակիցները դասավանդում են:

Քոլեջն ունի նաև «Սկսնակ դասախոսների մենթորության ընթացակարգ»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ աշխատանքի ընդունվելուց հետո սկսնակ դասախոսին կցվում է մենթոր մեկ տարի ժամանակահատվածով: Ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնների նկարագրերով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական առաջընթացի ապահովման մեխանիզմներ քոլեջում առկա չեն: Քոլեջն ունի «Տնօրենի և մանկավարժների պարգևատրման, նյութական խրախուսման, պաշտոնից ազատման մեխանիզմների ներքին կանոնակարգ», սակայն խրախուսման համար հստակ պահանջներ և չափանիշներ սահմանված չեն, յուրաքանչյուր տարվա ավարտին աշխատողները ստանում են միանվագ դրամական պարգևատրում /13-րդ աշխատավարձ/: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դիտարկվող ժամանակահատվածում միայն մեկ աշխատող է խրախուսվել շնորհակալագրով «Օդային հակառակորդի հարձակման դեպքում հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպում և իրականացում» բթեմայով իրեն լավագույնս դրսևորելու համար:

Դատողություններ: Քոլեջը հիմնականում ապահովված է համապատասխան որակի և քանակի ուսումնաօժանդակ և վարչական կազմով, որոնց գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնների նկարագրերով:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱՊԷՔ-ն իր կրթական ծրագրերն իրականացնելու համար ուղղորդվում է լիազոր մարմնի կողմից հաստատված մրցութային կարգով և հնարավորություն է ստեղծել աշխատանքի ընդունել ավելի պատրաստված մասնագետների: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը իր առանձնահատկությունից ելնելով կարող է մրցույթում պրակտիկ կոմպոնենտի պահանջը շեշտադրի:

Գնահատելի է որ քոլեջն ունի բոլոր ՄԿԾ-երի համար մեկ միասնական ձևաչափ՝ պաշտոնի նկարագիր, այդուհանդերձ խումբը կարևոր է համարում նաև պաշտոնի նկարագրի առանձնացում ըստ մասնագիտությունների, որը հետագայում թույլ կտա առավել արդյունավետ դարձնել դասախոսական կազմի համալրման գործընթացը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ դասախոսների մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին, սակայն միևնույն ժամանակ մտահոգ է, որ մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսները, հատկապես էներգետիկական ոլորտի մասնագիտություններում, դասավանդում են 10 և ավելի մասնագիտական մոդուլներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսների առավելագույն ծանրաբեռնվածության դեպքում քոլեջը կարող է վտանգել կրթական գործընթացի որակը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է քայլեր ձեռնարկի պրակտիկ ոլորտի մասնագետներին, գործատուներին ներգրավվելու համար, պետք է ամրապնդի քոլեջ-գործատու կապը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ լավ է, որ դասախոսական կազմում ընդգրկված են շրջանավարտ-դասախոսներ, սակայն մտահոգիչ է համարում, որ քոլեջի դասավանդման գործընթացում ներառված չեն պրակտիկ դասավանդողներ, գործատուներ, առկա չեն լաբորանտներ, որոնց առկայությունը կապահովի ուսանողների պրակտիկ հմտությունների և կարողությունների ձևավորմաը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը կիրառում է դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ՝ դասալսումներ և հարցման թերթիկներ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջն ունի նաև «Սկսնակ դասախոսների մենթորության ընթացակարգ» և գործում է համապատասխան գործընթաց այս ուղղությամբ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ տարեկան դասալսումներից հետո առարկայական հանձնաժողովների նախագահները ներկայացնում են վերլուծություններ, սակայն մտահոգ է, որ վերլուծություններին ընթացք չեն տրվել: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասալսումները կարող են ծառայել որպես արդյունավետ գնահատման միջոց, եթե դրանք ստանան համապատասխան արձագանք և հետևեն համապատասխան գործողությունների շղթա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ դասախոսական կազմը, թեև քիչ քանակով, բացի ՄԿՈՒԶԱԿ-ի պլանային վերապատրաստումներից, մասնակցում է նաև մասնագիտական դասընթացների,սակայն վերապատրաստումներից հետո քոլեջում փորձի փոխանցում տեղի չի ունենա: Փորձագիտական խումբը գտնում է, որ նման միջոցառումները կնպաստեն դասախոսների մասնագիտական և մանկավարժական որակների բարձրացմանը, առարկայական հանձնաժողովների լավ փորձի տարածմանն ուղղված միջոցառումների անցկացումը կարևոր է ինստիտուցիոնալ մակարդակում գործընթացներն ամրագրելու և դասախոսների կարիքներին համապատասխան բարելավման գործընթացները պլանավորելու համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարող է գործատուների հետ համատեղ իրականացնել դասախոսների վերապատրաստումները:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջում առկա չեն մասնագիտական առաջընթացի ապահովման հստակ մեխանիզմներ: Թեև քոլեջն ունի «Տնօրենի և մանկավարժների պարգևատրման, նյութական խրախուսման, պաշտոնից ազատման մեխանիզմների ներքին կանոնակարգ», այդուհանդերձ խրախուսման համար հստակ պահանջներ և չափանիշներ սահմանված չեն և չեն գործում: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհատական խրախուսումները կարող են մոտիվացնել դասախոսական կազմին և աշխատակիցներին՝ զարգացնելու իրենց մասնագիտական որակները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊԷՔ-ն ունի մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնելու համար համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, արդյունավետ գործող դասախոսների ընտրության մրցութային կարգ ներդրված է դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականություն, առկա է դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ, գործում է սկսնակ դասախոսների մենթորության ընթացակարգը, ունի համապատասխան քանակի ուսումնաօժանդակ և վարչական կազմ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԷՔ-ը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊԷՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Քոլեջի ՌԾ-ում ընդգրկված չեն հետազոտության ոլորտում քոլեջի սահմանած հիմնախնդիրները և դրանցից բխող գործողությունները: 2023 թվականին ԱՊԷՔ-ն մշակել է «Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականություն և կարգ», որի նպատակներից է հետազոտական և

կրթական գործունեության կապի ապահովումը, ուսումնառողների ստեղծագործական միջավայրի ապահովումն ու զարգացումը, երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործունեության պլանավորմամբ հետազոտությունների իրականացման և զարգացման ապահովումը և այլն: Փորձագիտական ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում դասախոսական կազմի հետազոտական գործունեության իրականացման երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումները, ինչպես նաև խրախուսման մեխանիզմները բացակայում են:

Վերջին 5 տարվա ընթացքում Քոլեջի դասախոսական կազմից 2-ն ունեն տպագրված ընդհանուր թվով 3 ուսումնական ձեռնարկ, որոնք ներդրվել են ուսումնական գործընթացում, ինչպես նաև Քոլեջի որոշ դասախոսներ մասնակցել են ՊԿՀ-ների մշակման աշխատանքներին, սակայն ձեռք բերված փորձառությունները չեն բերել ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի և կրթական գործընթացի զարգացման, մասնավորապես, չեն ներդրվել կուրսային աշխատանքներ և հետազոտական տարրեր պարունակող առաջադրանքներ առանձին դասընթացներում: «Հաշվապահական հաշվառում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների ուսանողները ուսումնական պրակտիկայի շրջանակում իրականացնում են անհատական առաջադրանքներ՝ բիզնես պլանի ստեղծում, կետային վեկտորային գրաֆիկաներ, կայք էջերի ստեղծում, որոնք իրենց բնույթով պարունակում են մասնակի վերլուծական և հետազոտական բաղադրիչներ, սակայն էներգետիկական ուղղվածությամբ մասնագիտություններում այսպիսի փորձը բացակայում է: Ռեֆերատների բովանդակությունն արտահայտվում է միայն տեսական փաստերի արձանագրում, որոնք դուրս են բերված համացանցից կամ թեմային առնչվող գրականությունից:

Ինքնավերլուծուրյան մեջ նշվում է, որ նախաավարտական արտադրական պրակտիկայի նպատակն է զարգացնել ուսանողների մոտ պրակտիկ գործունեության հմտություններ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այն կրում է միայն ցուցադրական բնույթ և Քոլեջն այդ հանգամանքը հիմնավորում էր ուսանողների անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ: Քոլեջն ունի համապատասխան կարողությունների զարգացման և հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքների կատարման համար նախատեսված վարժասարք, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այն չի օգտագործվում ուսումնական գործընթացում և հետազոտական կարողությունների զարգացման նպատակով:

Փորձագիտական ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջում չեն իրականացվում կուրսային և դիպլոմային աշխատանքներ, առկա չեն վերլուծական կարողությունների զարգացմանը միտված այլ հանձնարարականներ, բացառությամբ վերոնշյալ առանձին դեպքերի:

Քոլեջը չունի միջազգային և տեղական լավագույն փորձի ուսումնասիրություն և դասախոսական անձնակազմին հետազոտական գործընթացում ընդգրկելուն միտված խրախուսման մեխանիզմներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը նշում է, որ ՌԾ-ով սահմանված չեն հետազոտության ոլորտում քոլեջի առաջնահերթություններ ու հետաքրքրություններ, առկա չէ հետազոտության զարգացմանը միտված քաղաքականություն, դրանից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ, որը կարող է սահմանափակել ուսանողների և դասախոսների հետազոտական հմտությունների զարգացումը և նորարարությունների ստեղծումը:

Չնայած այն բանի, որ քոլեջն ունի «Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականություն և կարգ», այնուամենայնիվ, այս ուղղությամբ աշխատանքներ դեռևս քոլեջում չեն իրականացվում, փորձագիտական խումբը գտնում է, որ դրանց բացակայությունը խոչընդոտ է հանդիսանում քոլեջում հետազոտության զարգացման համար:

Փորձագիտական խումբը մտահոգ է, որ ՄՈՒՀ-ում դասախոսական կազմի հետազոտական գործունեության իրականացման երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումները բացակայում են, ինչպես նաև առկա չեն հետազոտական գործունեությամբ զբաղվելու խրախուսման մեխանիզմներ, ինչը վտանգում է այդ ուղղությամբ դասախոսների կատարելագործումը: Փորձագիտական խմբի կարծիքով, հետազոտության ոլորտում խրախուսման մեխանիզմների ներդրումը կարող է դասախոսներին մոտիվացնել հետազոտություն իրականացնելու գործում:

Փորձագիտական խումբը կարևորում է որոշ դասախոսների կողմից տպագրված ուսումնական ձեռնարկների առկայությունը և ՊԿԶ-ների մշակման աշխատանքներին մասնակցությունը, բայց գտնում է, որ արդյունքները թույլ են արտահայտված ուսումնական և հետազոտական գործընթացներում և կանոնակարգված չեն:

Փորձագիտական խումբը մտահոգություն է հայտնում ուսումնական գործընթացում կուրսային և դիպլոմային աշխատանքների, վերլուծական կարողություններին միտված առաջադրանքների բացակայությունը, ինչը ինժիներական ուղղվածությամբ մասնագիտությունների համար վերլուծական, հետազոտական և պրակտիկ կարողությունների զարգազման կարևորագույն բաղադրիչներից է, միաժամանակ հնարավորություն կտար զարգացնել հետազոտական գործունեությունը դասախասական կազմի մոտ և ուսանողության շրջանում:

Մտահոգիչ է նաև այն փաստը, որ քոլեջում հստակ տարանջատված չեն ռեֆերատների, գործնական, կուրսային աշխատանքների կատարման չափանիշները, բովանդակային և կառուցվածքային տարբերությունները, որի արդյունքում հստակ չէ՝ ո՞ր աշխատանքներն են իրենց բնույթով հետազոտական և կարող են նպաստել ուսանողների վերլուծական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը նաև խնդրահարույց է համարում, որ Քոլեջը հետամուտ չէ և չունի համապատասխան քաղաքականություն՝ ուղղված դասախոսական կազմի՝ մասնագիտական ոլորտում միջազգային և տեղական փորձի ուսումնասիրմանն ու ներդրման ուղղությամբ, միայն առանձին դեպքեր են առկա, ինչը դասախոսների

անձնական նախաձեռնությամբ է պայմանավորված և ինստիտուցիոնալ մոտեցումների հետևանք չէ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊԷՔ-ը չունի ՌԾ-ով սահմանված հետազոտական առաջնահերթություններ, հետաքրքրություններ և քաղաքականություն, բացակայում են հետազոտության ոլորտի միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումները, դասախոսական կազմը շահադրդված չէ հետազոտություն իրականացնելու գործում, բացակայում են մասնագիտական ոլորտում միջազգային և տեղական փորձի ուսումնասիրման գործընթացները, գրեթե բացակայում են ուսանողների հետազոտական կարողություններ և ստեղծագործական հմտություններ ձևավորող առաջադրանքները, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԷՔ-ը չի բավարարում 6-րդ չափանիշի պայմաններին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊԷՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է անբավարար:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի 2023-2028 թթ. ՌԾ-ի հիմնախնդիրները մեծապես ռեսուրսների զարգացմանն են ուղղված. 1. քոլեջի շենքային պայմանների հարմարեցում սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց, 2. Ուսումնական մասնաշենքի սանհանգույցների հիմնանորոգում, 3. Քոլեջի տարածքի ոռոգման համակարգի հիմնանորոգում, 4. Ուսումնական մասնաշենքի լսարանների վերանորոգում, 5. Մասնագիտական կաբինետների վերանորոգում և վերազինում, 7. Սլայդ լսարանի ստեղծում, 8. Ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման և դրանց բազմազանեցման հարցերում նախաձեռնողականության դրսևորում, 9. Քոլեջի հարակից տարածքի բարելավում /կանաչապատում, ցանկապատում, բարեկարգման աշխատանքներ/, 10. Գրադարանային ֆոնդի մասնագիտական, գեղարվեստական և ժամանակակից գրականությամբ համալրում, 11. Սպորտդահլիճի տանիքի ծածկի հիմնանորոգում: Հարկ է նշել, որ այս հիմնախնդիրները հիմնականում առկա են եղել նաև նախորդ ՌԾ-ում:

Քոլեջն ունի 8697.04 մ² ընդհանուր մակերեսով շենքային տարածք (նաև 43167 մ² հողային տարածք), մեկ ուսանողին բաժին ընկնող լսարանային մակերեսը կազմում է շուրջ 25 մ²: Քոլեջն ունի հանդիսությունների դահլիճ՝ 360 նստելատեղով, ՆԶՊ լսարան, սպորտդահլիճ, անվտանգության կաբինետ, էլեկտրոտեխնիկայի լաբորատորիա, էներգետիկայի լաբորատորիա, գազամատակարարման սարքերով կաբինետ, վարժադաշտ: Քոլեջն ունի 18 լսարան և 7 կաբինետ, որտեղ առկա են դիդակտիկ նյութեր և սարքավորումներ: Հարկ է նշել, որ էներգետիկական ուղղությամբ մասնագիտական

կաբինետներում սարքավորումները հին են, բայց հնարավորություն ընձեռում են հիմնական կարողությունների ձևավորման խնդիրներ լուծելու: Այնուամենայնիվ փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջը իր ունեցած ռեսուրսային բազան լիարժեք չի կիրառում, մասնավորաբար սլայդ-լսարանը կիրառվում է միայն միջոցառումների, բաց դասերի համար, վարժադաշտը չի կիրառվում, իսկ լաբորատորիաները խիստ մասնակիորեն են կիրառվում: Համակարգչային լսարանն ունի 17 համակարգիչ, որոնք տեխնիկական վերազինման և ծրագրային համալրման կարիք ունեն: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջը կենսաբանության լաբորատորիա չունի, ունի ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաներ, որոնք սակայն հին են և կիրառելիություն չեն ունենում:

Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջը նախատեսում էր նախնական համաձայնությամբ արդեն նոր ուսումնական տարում ուսումնական մասնաշենքում հիմնել հելիոլաբորատորիա՝ Ջի Այ Զեթի աջակցությամբ:

Քոլեջի գրադարանն ունի շուրջ 7949 միավոր գրականություն, այդ թվում՝ դասագրքեր, գրքեր, մասնագիտական գրականություն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում հայերենով և ռուսերենով է: Գրադարանը թվայնացված չէ: Ուսումնասիրություններից պարզվեց, որ գրադարանային բազան համալրվում է հիմնականում նվիրատվությունների միջոցով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջը հիմնականում մասնակիորեն է օգտագործում գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները՝ պայմանավորված անվտանգության նկատառումներով: Էներգետիկայի ուղղությամբ մասնագիտությունների պարագայում դա դրսևորվում է հիմնականում դիտումով: Մասնավորաբար, Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում մասնագիտության ուղղությամբ չունեն գործատուներ, պրակտիկաներն անցկացնում են քոլեջում, սակայն համակարգիչների հնարավորությունները սահմանափակ են և հնարավորություն չեն ընձեռում կրթական ծրագրի համար անհրաժեշտ ծրագրեր գործարկելու: Հաշվապահական հաշվառում մասնագիտության պարագայում կիրառում են նաև գործատուների հնարավորությունները, սակայն հիմնականում պրակտիկաներն անցկացնում են քոլեջի հաշվապահությունում, այս պարագայում ուսանողական խմբի համար մեկ համակարգիչ է առկա, որը հաշվապահի աշխատանքային համակարգիչն է: Հարկ է նշել, որ նախնական մասնագիտական Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում կրթական ծրագրի պարագայում ուսանողները հնարավորություն են ունենում որոշակիորեն կիրառելու գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները և մասնակից դառնալու աշխատանքներին:

Քոլեջն ունի 1 անշարժ պրոյեկտոր: Վերջինս նոր գործարկված սլայդ-լսարանում է: Նաև՝ նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացից հետո համալրվել է 1 մասնագիտական կաբինետով: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից

պարզ դարձավ նաև, որ քոլեջը չի իրականացրել լսարանային ֆոնդի վերանորոգումներ, բարելավումներ: Վերանորոգումներն ու բարելավումները դեռևս իրականացվել են վարչական մասնաշենքում և վարչական մասնաշենքից ուսումնական մասնաշենք տանող միջանցքում:

Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2023 թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի շուրջ 84 %-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, շուրջ 10 %-ը հատկացվել է կրթաթոշակների, իսկ շուրջ 5 %-ը տնտեսական ծախսերի, մնացածը՝ ընթացիկ որոշ ծախսերի: Ըստ 2023-2028 թթ. ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների բյուջեի բաշխման տվյալների՝ ռազմավարական ուղղություններով քոլեջը դրամական հատկացումներ չի տրամադրել: Միաժամանակ առկա չեն երաշխիքներ, որ առաջիկայում բյուջեն հնարավորություն կընձեռի ռազմավարական ուղղություններով հատկացումներ կատարելու, նաև նախադրյալներ ստեղծված չեն այս ուղղությամբ: Թերևս ակնկալում են դրանք իրականացնել որոշակի համագործակցությունների միջոցով, սակայն նախադրյալներ ստեղծվել են դեռևս միայն հելիոլաբորատորիայի հիմնման ուղղությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն: 2023 թ. քոլեջի բյուջեի եկամուտների 96.36 %-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, 2.58 %-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը, իսկ մնացածը այլ մուտքեր (ներառյալ էլ. ենթակայանի օգտագործումից): Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջն չի իրականացնում կարճաժամկետ դասընթացներ կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան, չնայած որ ՌԾ-ով նախատեսված հիմնախնդիր է եղել և այժմ էլ հանդիսանում է:

Քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել և հստակ չէ՝ ուսանողների ո՞ր քանակն է ապահովում ինքնածախսածածկում: Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն չի արձանագրվել:

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով, հաստատության ներսում՝ էլեկտրոնային փոստի կիրառմամբ կամ ուղղակի հաղորդակցմամբ: Ներքին փաստաթղթաշրջանառությունը ևս իրականացվում է կամ էլեկտրոնային փոստի կիրառմամբ կամ ուղղակի հաղորդակցմամբ: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ, տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ: Քոլեջն ունի նաև կենտրոնական ջեռուցման համակարգ, սակայն վերջինս ծառայում է միայն վարչական մասնաշենքի համար, իսկ ուսումնական մասնաշենքը վերջերս են սկսել ջեռուցել վառարանների միջոցով, մինչ այդ առավել լուրջ խնդիր է եղել: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ ուսումնական մասաշենքի ջեռուցումը շարունակում է խնդիր մնալ,

հատկապես, որ այդ մասնաշենքը նաև հիմնանորոգման կարիք ունի: Նաև 2023-2024 ուստարվա հարցումների արդյունքներով ևս ուսանողների շուրջ 30%-ը, իսկ դասախոսների 40%-ը դժգոհ է ջեռուցումից: Որոշակի աշխատանքներ էին իրականցվել այդ մասնաշենքի տանիքի նորոգման ուղղությամբ: Քոլեջը չունի բուժկետ, և նկատելի չէ այս հարցին այլընտրանքային լուծման առկայություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ: Մուտքի մոտ առկա է մեկեն թեքահարթակ: Որպես ապաստարան հատկացված տարածքը բարվոք վիճակում է գտնվում, այդ ուղղությամբ վերջին տարիներին նաև աշխատանքներ են ծավալվել:

2023-2024 թթ. քոլեջն իրականացրել է հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, որտեղ անդրադարձ կա ռեսուրսներից բավարարվածությանը, որոնց արդյունքներով ուսանողներն ու դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են /շենքային պայմաններ, համակարգչային լաբորատորիայի ծրագրային ապահովվածություն, ուսումնական լսարանների պայմաններ, գրականությունից, սանիտարահիգիենիկ պայմաններ/ ծառայություններից, չնայած վերլուծություններում անհամապատասխանություն կա բառային նկարագրական տվյալների և դիագրամների միջև: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ դասախոսների շուրջ 27%-ը դժգոհ են ուսումնական լսարանների պայմաններից, իսկ շուրջ 18%-ը՝ շենքային պայմաններից: Միաժամանակ, ուսանողների շուրջ 18%-ը դժգոհ են շենքային պայմաններից, 22%-ը՝ համակարգչային լաբորատորիայի ծրագրային ապահովվածությունից, 14%-ը՝ լսարանային պայմաններից, իսկ 28%-ը՝ սանիտարահիգիենիկ պայմաններից: Հարկ է նշել, որ շահակիցները նշում են նաև ճաշարանի անհրաժեշտության մասին, սակայն քոլեջում ճաշարան դեռևս չի գործում: Որպես ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմ նշում են դեռևս նոր ներդրված այդ հարցումները և խնդիրների անմիջական ներկայացումը ուսանողների և դասախոսների կողմից: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ մասնավորաբար տարբեր ռեսուրսների հասանելիության խնդիրներ են առկա, ինչին անդրադարձ կատարեցինք վերևում, մինչդեռ այդ խնդիրը քոլեջի կողմից չէր դիտարկվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը հատուկ կարևորություն է տալիս ռեսուրսների զարգացմանը՝ սահմանելով ռազմավարական հիմնախնդիրներ, սակայն կարևոր է, որպեսզի այդ պլանավորումը ունենա իրականացման երաշխիքներ:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ որպես միջին մասնագիտական համակարգում էներգետիկական ոլորտի միակ քոլեջ ունի ռեսուրսային բավականին հարուստ ժառանգություն, թե՛ տարածքային, շենքային, թե՛ լաբորատոր բազայի տեսանկյունից: Ընդ որում հարկ է նշել, որ էներգետիկական ոլորտի լաբորատորիաները և դիդակտիկ նյութերն այնպիսին են, որ կարող են արդյունավետ կիրառելիություն ունենալ այժմ էլ: Սակայն, փորձագիտական խումբը նշում է, որ դրանք լիարժեք

արդյունավետությամբ չեն կիրառվում: Մինչդեռ ռեսուրսների լիարժեք կիրառումը կարող է նպաստել գործնական կարողությունների բարելավմանը: Այս տեսանկյունից մեծ կարևորություն ունի նաև գործատուների հետ համապատասխան համագործակցության շրջանակի հաստատումն ու գործատուների ռեսուրսային բազայի կիրառումը՝ կրթական նպատակներով պայմանավորված: Իհարկե, կարևոր է նաև, որ ժամանակակից միջոցներով համալրումների ուղղությամբ աշխատանքներ ծավալվեն:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ քոլեջը կարողացել է համակարգիչների որոշակի թարմացում կատարել, սլայդ լսարան ունենալ, բավականին նորոգման աշխատանքներ իրականացնել վարչական մասնաշենքում և որոշակիորեն նաև՝ ուսումնական մասնաշենքում: Սակայն, փորձագիտական խումբը կարևորում է, որպեսզի առաջնային դիտարկվի ուսումնական անհրաժեշտ միջավայրի ապահովումը՝ մասնավորաբար ուսումնական մասնաշենքի պատշաճ ջեռուցումը, սանիտարահիգիենիկ և պատշաճ ու գրավիչ պայմանների ապահովումը, ուսումնական գործընթացի պահանջներին համապատասխան հնարավորություններով համակարգիչների և ծրագրերի ապահովումը, ինչը կնպաստի ուսանողների առավել մոտիվացված ուսումնառությանը, իսկ դասավանդողների՝ մոտիվացված դասավանդմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում հելիոլաբորատորիայի հիմնման հնարավորության ստեղծումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն ունի ներքին և արտաքին փաստաթղթաշրջանառության սահմանված մոտեցումներ, միաժամանակ կարևորում է ներքին համակարգում արդի տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը, ինչը կնպատստի գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը կարողացել է ապահովել անվտանգ միջավայր, այս տեսանկյունից նաև դրական է ապաստարանի առկայությունը, սակայն փորձագիտական խումբը կարևորում է նաև առաջին օգնության տրամադրման հնարավորությունը աշխատակիցների և ուսումնառողների համար:

Չնայած քոլեջն իրականացնում է տարեկան ֆինանսական պլանավորումներ, սակայն փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում, որ քոլեջը չի իրականացնում երկարաժամկետ ֆինանսական պլանավորում, նաև, որ ֆինանսական միջոցներն էլ աշխատավարձի վճարումից զատ հիմնականում այլ հնարավորություններ չեն ընձեռում: Այս տեսանկյունից կարևոր կլիներ ընթացիկ և նախորդող ՌԾ-ներով նախատեսված հիմնախնդրի լուծումը՝ ուղղված ֆինանսական մուտքերի բազմազանեցմանը, սակայն քոլեջը արդյունքներ չունի այս ուղղությամբ: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է գործուն քայլեր ձեռնարկի այս ուղղությամբ, նաև ուշադրություն դարձնի ըստ ՄԿԾ-ների ֆինանսական պլանավորումներին՝ իրականացնելով անհրաժեշտ համապատասխան տվյալների հավաքագրում և վերլուծություն: Այս ամենը կնպաստի ֆինանսական ուղղությամբ ռիսկերի նվազեցման և խնդիրների լուծման:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջն ունի ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման որոշակի մեխանիզմ, որը թույլ է տվել որոշակի խնդիրներ վերհանել, սակայն անհրաժեշտություն կա բարելավելու մեխանիզմը և իրականացնելու համակողմանի վերլուծություններ՝ երաշխավորելով առկա կարևոր խնդիրները չանտեսելու հանգամանքը: Միաժամանակ փորձագիտական խումբը կարևորում է, որ խնդիրների բացահայտմանը հաջորդեն դրանց լուծմանն ուղղված քայլեր:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊԷՔ-ն ունի ռեսուրսային բավականին հարուստ ժառանգություն, կարևորում է ռեսուրսների զարգացումը, քայլեր է ձեռնարկում նոր լաբորատորիաներ հիմնելու ուղղությամբ, ընդհանուր առմամբ ապահովում է անվտանգ միջավայր, ներդրել է ռեսուրսների գնահատման որոշակի մեխանիզմ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԷՔ-ը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊԷՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է բավարար:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում որոշակիորեն գործում է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները պարբերաբար ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունները Կրթության որակի պատասխանատուին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայացված հաշվետվությունները կրում են նկարագրական բնույթ, չունեն համընդհանուր տեսք, որակական վերլուծություններ, թվային տվյալները հիմնականում չեն արտացոլում քոլեջի առաջնահերթ ռազմավարական գործողությունների կատարողականները:

Որոշակի վերլուծական բաղադրիչներ և առաջարկություններ առկա են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի և ՈԱԿ-ի հաշվետվություններում:

Բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվության և արդյունքների հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից կազմվում և Կառավարման խորհրդին է ներկայացվում հաշվետվություն՝ տարեկան գործունեության վերաբերյալ, որը քոլեջի գործունեության մասին հիմնական հաշվետու փաստաթուղթն է: Տնօրենը հաշվետու է կառավարման խորհուրդին և ԿԳՄՍ նախարարությանը:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տնօրենի հաշվետվությունները չունեն վերլուծական հիմք. ըստ տարիների ներկայացված են ֆինանսական ցուցանիշներ, դասախոսական կազմի և ուսանողական համակազմի շարժը, ընդունելության ցուցանիշները և այլն:

Քոլեջում նոր է ներդրվել և գործում ներքին հաշվետվողականության վերլուծման և գնահատման քաղաքականություն՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո բոլոր ստորաբաժանումների ղեկավարները տնօրենին են ներկայացնում կատարված աշխատանքների արդյունքները:

Քոլեջն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակներ օգտագործելով քոլեջի ֆեյսբուքյան էջը, որը տրամադրում է տեղեկություն քոլեջի ընթացիկ միջոցառումների, բաց դասերի, դաս-միջոցառումների և ընդունելության գործընթացի մասին: Տրամադրվում է անընդհատ թարմացվող տեղեկատվություն Քոլեջի գործունեության, նվաճումների, միջոցառումների, էքսպոների մասնակցության և այլ հայտարարությունների վերաբերյալ:

2023-24 ուս. տարվանից քոլեջում գործարկվել է տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող նոր հարթակ՝ պաշտոնական կայքէջ (https://www.apeq.am/), որը սկսել են համալրել որոշ փաստաթղթերով: Սակայն փորձագիտական այցի ընթացքում այն դեռևս լիարժեք չէր գործում և գտնվում էր մշակման փուլում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախկինում ԶԼՄ-ներով Քոլեջի գործունեության վերաբերյալ լուսաբանումներ են եղել, որոնք համարվել են ամենաարդյունավետ միջոցներից, սակայն նեկայումս այդ միջոցից չեն կարողանում օգվել, տեղական հեռուստաալիքի փակմամբ և սուղ ֆինասական միջոցներով պայմանավորված: Այս փաստը քոլեջը դիտարկում է որպես խնդիր տարածաշրջանից դուրս նրանց ճանաչման և տարածման տեսանկյունից:

Հասարակության հետ հետադարձ կապի հաստատման միջոցների ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում որոշակիորեն գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ: Հետադարձ կապի հաստատման հիմնական միջոցներից է քոլեջի ֆեյսբուքյան էջը, պաշտոնական կայքէջը, կազմակերպվող ճանաչողական և Քոլեջի գործունեության լուսաբանման վերաբերյալ շրջայցերը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ: Մասնավորապես՝ իրականացվում են բաց դասեր, որոնց հրավիրում են նաև հյուրերի, կատարվում են շրջայցեր տարբեր կազմակերպություններ և դպրոցներ, Քոլեջի աշխատակիցները և ուսանողները մասնակցում են ցուցահանդեսների, միջոցառումների և այլն: Հարկ է նշել, որ Քոլեջն ուներ պատերազմի մասնակից ուսանողներ

և նրանց հիշատակին նվիրված զինվորների անկյուն, ինչպես նաև հրաձգարան որտեղ դասախոսական կազմն ու ուսանողները ձեռք են բերում ռազմական գիտելիքներ:

Քոլեջը դեռևս չի իրականացրել հասարակության՝ քոլեջից ակնկալիքների գնահատում, դեռևս նման մեխանիզմներ չեն ներդրվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի ներդրված, բարելավվող հաշվետվողականության համակարգ, հաշվետվություններ են ներկայացվում ոլորտը համակարգող պետական լիազոր մարմնին, առկա են քոլեջի տնօրենի, բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները, ինչը փաստում է, որ քոլեջը փորձում է իրականացնել համակարգված և ամփոփված գործընթացներ, որը խթան կհանդիսանա հաշվետվություններում վերլուծական բաղադրիչների ընդլայնմանը: Միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ քոլեջում հաշվետվությունները միասնական ձևաչափով չեն իրականացվում, որը որոշակի դժվարություններ կարող է առաջացնել նաև քոլեջի կրթական և տնտեսական գործընթացների ամփոփման և գնահատման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ բոլոր ստորաբաժանումների մասնակցությամբ համագործակցային հաշվետվողականությունը կարող է դրականորեն անդրադառնալ քոլեջի կառավարման համակարգի բարելավման վրա: Փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԷՔ-ի հաշվետվողականության համակարգը լավարկման, առավել վերլուծական դառնալու կարիք ունի, ինչը առկա փորձը տարածելի, իսկ խնդիրերը լուծելի կդարձնի:

Փորձագիտական խմբի կողմից դրական է համարվում այն, որ Քոլեջն ակտիվ գործունեություն է ծավալում ֆեյսբուքյան հարթակում. հրապարակումների միջոցով Քոլեջը տեղեկատվություն է փոխանցում իր ներքին աշխատանքների վերաբերյալ: Միևնույն ժամանակ թույլ են գործում հետադարձ կապի մեխանիզմները, չկա միասնական, հստակ մոտեցում հատկապես արտաքին շահակիցների կարիքների բացահայտման ուղղությամբ: Փորձագիտական խմբի կարծիքով՝ կայքէջի լիարժեք գործարկումը կնպաստի քոլեջի գործընթացների թափանցիկության ապահովմանը, ինչպես նաև կարող է հիմք հանդիսանալ շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱՊԷՔ-ում իրականացվում են մի շարք միջոցառումներ, որոնք միտված են ներքին շահակիցներին գիտելիքներ և արժեքներ փոխանցմանը, սակայն դրանք իրականացվում են փակ տիրույթում, դրանց տարածումը արտաքին շահակիցների շրջանում կհանգեցնի արժեքիների և գիտելիքների ձևավորման գործում Քոլեջի ակտիվ դերակատարության հաստատմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը քայլեր է ձեռնարկում՝ ուղղված փաստաթղթերի հրապարակմանը պաշտոնական կայքէջում, ինչը կնպաստի քոլեջի գործընթացների թափանցիկության ապահովմանը և կնպաստի քոլեջի վարկանիշի բարձրացմանը:

Գնահատելի է հասարակության հետ հետադարձ կապ հաստատելու և հաշվետվողականություն ապահովող միջոցների առկայությանը, և կարևորում է, որ Քոլեջ

մեծ նշանակություն է տալիս հասարակության հետ հետադարձ կապ հաստատելուն և այս ուղղությամբ իրականացնում են գործիքակազմների ընդլայնման աշխատանքներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում որոշակիորեն գործում է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ, նոր ներդրված ներքին հաշվետվողականության քաղաքականություն, առկա են քոլեջի գործունեության մասին հասարակությանը իրազեկելու և գործունեության թափանցիկությունը ապահովելու, հետադարձ կապի որոշ մեխանիզմներ և քայլեր են ձեռնարկվում դրանք զարգացնելու ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԷՔ-ը բավարարում է 8-րդ չափանիշի պայմաններին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊԷՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է բավարար:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերը և միջազգայնացումը որպես առաջնահերթություն չի դիտարկվում Քոլեջի կողմից և ներառված չէ 2023-2028թթ. ՌԾ-ում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման գործառույթը քոլեջում իրականացնում են տնօրենը, պրակտիկայի վարիչը և կարիերայի կենտրոնի պատասխանատուն:

Հաստատությունը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է շուրջ 10 տեղական գործընկերների հետ, պրակտիկայի իրականացման ուղությամբ: ՄՈՒՀ-ն ունի գործատու-գործընկերներ գրեթե բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության արդյունքում հաստատությունը կազմակերպում է միայն պրակտիկաներ և ճանաչողական շրջայցեր: «Էլեկտրամատակարարում» մասնագիտության ուսումնական և նախաավարտական պրակտիկաները ուսանողներն անցնում են «Էներգաչափ» ՓԲԸ Գեղամա 1 լաբորատորիայում, «ՀԵՑ» ՓԲԸ-ում, «ՀԵՑ» Գեղամա մասնաճյուղում, «Ջերմաէլեկտրակայաններ» և «Ջերմամատակարարում և ջերմատեխնիկական սարքավորումներ» մասնագիտությունների ուսումնական և նախաավարտական պրակտիկաները՝ «ՀԵՑ» Գեղամա մասնաճյուղում, «Հրազդան ՋԷԿ» ԲԲԸ-ում, «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ում, «Էլեկտրահաղորդման գծերի տեղակայում և շահագործում» մասնագիտության ուսումնական և նախաավարտական պրակտիկաները՝ «ՀԵՑ» Գեղամա մասնաճյուղում, «Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի հավաքակցում և շահագործում» մասնագիտության պրակտիկան «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսումնական

պրակտիկան ուսանողները անցկացնում են քոլեջի հաշվապահությունում: Նախաավարտական պրակտիկան՝ «Նիկոլ Ինթերնեշնլ Արմենիա» ՍՊԸ-ում, «Ֆըրս Ըքաունթինգ» ՍՊԸ-ում, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ուսումնական և նախաավարտական պրակտիկաները ԱՊԷՔ-ում, «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության պրակտիկան «Արև էներջի» ՍՊԸ-ում:

Այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը համագործակցում է նաև ՀՀ մի քանի բուհերի հետ և ունի կնքված հուշագրեր: Իրականացվում են ճանաչողական այցեր բուհեր, տարվում են աշխատանքներ մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ, որից հետո բարձր գնահատականներով քոլեջն ավարտած ուսանողները կրթությունը շարունակում են գործընկեր բուհ հանդիսացող հաստատությունում 2-րդ կուրս, հեռակա բաժնում:

Փորձագիտական ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որոշ գործատուների մոտ պրակտիկայի իրականացումը կրում է ճանաչողական այցի բնույթ և անհրաժեշտ գարծնական հմտությունները թույլ են ձևավորվում, որը պայմանավորված է գործատու-գործընկերների մոտ պրակտիկայի ընթացքում արտադրական կամ ծառայությունների մատուցման գործընթացի, աշխատանքի անվտանգության, և ուսանողների կենսագործունեության անվտանգության հետ: Ինչպես նաև պարզվեց, որ ի տարբերություն նախաավարտական պրակտիկայի, ուսումնական պրակտիկայի իրականացման ժամանակ օրագրեր չեն լրացվում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի և միջազգայնացման գծով առանձին աշխատակից քոլեջը չունի: ՄՈՒՀ-ը չունի որոշակի փորձառություն նաև միջազգայնացման գործընթացներում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում «Ֆաառալպ» հիմնադրամի միջոցով Քոլեջը աշխատանքներ է տանում նոր լաբորատորիայի ստեղծման ուղղությամբ, սակայն դրանք դեռևս բանավոր-բանակցությունների տեսքով են: Ուսումնասրություններից պարզ դարձավ, որ քոլեջի արտաքին շահակիցներն ընդգրկված չեն և չունեն իրենց մասնակցությունը ՄԿԾ-ների փոփոխման և բարելավման ուղղված գործընթացներում:

Իսկ ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների տիրապետմանը, ապա ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասավանդողների *40*%-ը, վարչական աշխատակիցների՝ *60*% տիրապետում են օտար լեզուների *(*ռուսերեն կամ անգլերեն): Անհրաժեշտ է փաստել, որ ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկում դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ կազմակերպելով ներքին վերապատրաստումներ՝ տարբեր մակարդակների համար համար, սակայն այցից պարզ դարձավ, որ վերապատրաստումները ժամանակավորապես դադարեցված են: Հանդիպումներից պարզ դարձավ, որ ներքին շահակիցների օտար լեզվի իմացության բացը խոչընդոտ է հանդիսանում միջազգային ծրագրերի մասնակցության,

օտարալեզու գրականությունից օգտվելու, դասախոսական կազմի՝ օտարալեզու վերապատրաստումների մասնակցելու տեսանկյունից:

Հարկ է նշել նաև, որ Քոլեջի արտաքին շահակիցների քանակը բավականին սակավաթիվ է և արտաքին կապերի և միջազգայնացման գծով դերակատարություն չունեն:

Դատողություններ: Դրական է, որ Քոլեջի ղեկավարությունը ջանքեր է գործադրում արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը մտահոգ է, որ Քոլեջը արտաքին կապերը և միջազգայնացումը ՌԾ-ում չի դիտարկում որպես առաջնահերթություն: Այդ ուղղությամբ քոլեջի իրականացված քայլեր ու լուծումները դեռևս չի դիտարկվում արդյունավետ արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտում: Դրանք դեռևս համակարգված և պարբերական չեն, չեն ապահովում քոլեջի միջազգայնացման և արտաքին կապերի զարգացումն ու արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը մտահոգ է, որ էներգետիկական ուղղվածությամբ որոշ արտաքին շահակիցների գորունեության առանձնահատկություններից ելնելով իրականացվող պրակտիկաների ընթացքում ուսանողների մոտ հնարավոր է ոչ լարժեք ձևավորվեն պրակտիկ կարողությունները: Փորձագիտական խումբը գտնում է, որ այս ուղղությամբ Քոլեջը ունի կառավարման ճկունության պակաս: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ արտաքին շահակիցների հետ համագործակցությունը սահմանափակ է, և այս ուղղնությամբ տարվող հստակ աշխատանքները կնպաստեն տարածաշրջանում արտաքին կապերի ընդյանմանն ու ամրապնդմանը:

Փորձագիտական խումբը մտահոգ է, որ ՄՈՒՀ-ը չունի որոշակի փորձառություն նաև միջազգայնացման գործընթացում, միևնույն ժամանակ կարևորում է Քոլեջի կողմից իրականացվող քայլերը նոր լաբորատորիայի ստեղծման ուղղությամբ, ինչը կբերի Քոլեջի կրթական որակի և վարկանիշի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով ներդրված ներքին վերապատրաստումները, սակայն գտնում է, որ այն չի նպաստում արտաքին կապերի և միջազգայնացման ուղղված գործընթացների զարգացմանն ու առաջխաղացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊԷՔ-ի ՌԾ-ով արտաքին կապերն և միջազգայնացումը սահմանված չէ որպես առաջնահերթություն, առկա է այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների պասիվություն, միջազգային գործընթացներում քոլեջի փորձառության բացակայություն, ինչպես նաև անձնակազմի և ուսանողների օտար լեզուների իմացության ներկայիս վիճակը, արտաքին շահակիցների հետ համագործակցության սակավություն՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԷՔ-ը չի բավարարում 9-րդ չափանիշի պայմաններին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊԷՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է անբավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2021թ.-ի փետրվարից: Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը փորձել է ձևավորել համապատասխան փաստաթղթային բազա: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս նպատակով քոլեջի Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել է «Որակի ապահովման կենտրոնի կանոնադրություն», որի հիման վրա մշակվել է «Որակի ապահովման քաղաքականությունը», որը սահմանում է որակի ապահովման գործընթացների իրականացման սկզբունքները, ուղենիշները և ընթացակարգերը: Քաղաքականության համաձայն՝ ՈԱ համակարգի առաքելությունն է նպաստել ԱՊԷՔ-ի ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացմանը, ԱՊԷՔ-ում մասնագիտական կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համապատասխանությանը, սովորողի համար սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը, մատուցվող կրթության համապատասխանեցմանը ՈԱՇ-ին, գործունեության արդյունավետության բարձրացմանը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կենտրոնի առաջնային նպատակներից է ՄԿԾ-ների շարունակական վերանայումը, առարկայական ծրագրերի թարմացումները ու հստակեցումները, ինչպես նաև որակի ապահովման մեխանիզմների գործադրմամբ՝ Քոլեջում բանիմաց և բազմակողմանի զարգացած միջին մասնագիտական որակավորում ունեցող էներգետիկական կադրերի պատրաստմանը խթանելը:

Որակի մշակույթի խթանման, կրթության որակի ապահովման հետագա աշխատանքների կատարման համար տնօրենի հրամանով 2023թ.-ի նոյեմբերին ստեղծվել է ՈԱ աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկված են 8 դասախոսներ և ՈԱ ուսանողական խումբ՝ 11 ուսանողներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խումբը հիմնականում զբաղվել է ինքնավերլուծության աշխատանքներով: Քոլեջում որակի մշակույթի խթանման, ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման նպատակով՝ տնօրենի 2022թ. հոկտեմբերի 25-ի հրամանով ստեղծվել է նաև ֆոկուս խումբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆոկուս խմբի նպատակը եղել են ուսանողների հետ հանդիպումները:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցից պարզ դարձավ, որ Որակի ապահովման պատասխանատուն չունի տարեկան աշխատանքային պլան, սակայն առկա է տարեկան հարցումների անցկացման ժամանակացույց, որով անդրադառնում են ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանմանը, դասավանդման որակի գնահատմանը և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի համար քոլեջը հատկացրել է մեկ դրույքաչափ հաստիք: Նախատեսված է առանձին աշխատասենյակ ՈԱ պատասխանատուի և կարիերայի ուղղորդման պատասխանատուի աշխատանքներն իրականացնելու համար: Քոլեջը ՈԱ կենտրոնին տրամադրել է անհրաժեշտ ռեսուրսներ աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի որակի ապահովման պատասխանատուի կողմից պարբերականորեն իրականացվում են հարցումներ քոլեջի շահակիցների շրջանում՝ վերհանելու ուսանողների, դասախոսների, շրջանավարտների կարիքները: Ըստ հաստատված տարեկան ժամանակացույցի քոլեջը անցկացնում է հարցումներ, որոնց իրականացման հիմնական պատասխանատուն կրթության որակի պատասխանատուն է՝ կարիերայի ուղղորդման պատասխանատուի և պրակտիկայի վարիչի աջակցությամբ: Իրականացվել են հետևյալ հարցումները՝ «Քոլեջի մասին դիմորդների իրազեկվածության հարցում», «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցում», «Կազմակերպված պրակտիկայի արդյունավետության գնահատում», «Դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքից բավարարվածության հարցում», «Դասախոսների գնահատման հարցում», «Կառավարման խորհրդի ներքին և արտաքին շահակիցների աշխատանքի արդյունավետության գնահատման հարցում», «Շրջանավարտների հարցում», «Քոլեջի ռեսուրսների ապահովվածության վերաբերյալ հարցում»: Հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում ներառված հարցերը հիմնականում ընդհանրական են, սակայն առկա էին նաև հարցումներ, որոնցում ներառված հարցերը դիպուկ էին, օրինակ դասավանդման որակի և արդյունավետության գնահատման ուսանողական հարցումը: Արտաքին շահակիցների հետ կատարված հարցումները դրանք Պետական ամփոփիչ ատեստավորման նախագահների հաշվետվություններն են: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքում վեր են հանվել բարելավման ենթակա խնդիրներ՝ օրինակ ուսումնական մասնաշենքի ջեռուցման, վերանորոգման, ճաշարանի, վեր են հանվել գնահատման հետ կապված խնդիրներ, ուսումնառության նյութի ծավալի հետ կապված խնդիրներ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցից պարզ դարձավ, որ հարցումներ կազմակերպվում և իրականացվում են ըստ համապատասխան ժամանակացույցի, սակայն արդյունավետության գնահատում չի իրականացվում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կիրառվող հարցաթերթերի արդյունավետության գնահատում չի իրականցվել, և վերջիններս նաև չեն վերանայվել, հավաքված տվյալների հիման վրա որոշումներ չեն կայացվել:

Որակի ապահովման համակարգը քոլեջում նոր է, քոլեջն ունի որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատում չի իրականացվել: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը նախորդ հավատարմագրումից հետո հետամուտ է եղել միայն կարգերի և ընթացակարգերի ստեղծմանը, սակայն դրանցից շատերը դեռևս չեն կիրառվում:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում հիմնականում ներկայացվել են առկա անհրաժեշտ հիմքերը, վերլուծությունների արդյունքները, սակայն ինքնավերլուծությունն ավելի շատ նկարագրական էր, սակավ են որակական բնույթի վերլուծություններն ու տվյալները և անդրադարձ չկա նախորդ հավատարմագրման աշխատանքների արդյունավետության գնահատմանը: Ինքնավերլուծության մեջ նշված թվային տվյալներում կան որոշ անհամապատասխանություններ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի որակի ապահովման պատասխանատուի կողմից կազմակերպվել և համակարգվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը: Կազմված ինքնանավերլուծությունը, այսուհանդերձ, չի տարածվել շահակիցների ամբողջական շրջանակում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների և ներքին շահակիցների կարիքները ամբողջությամբ արտացոլված չեն ինքնավերլուծությունում, ինչպես նաև չի երևում նրանց մասնակցությունը ինքնավերլուծության աշխատանքներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Որակի ապահովման ներքին համակարգն ամբողջովին չի ապահովում քոլեջի գործունեության թափանցիկությունը: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը պաշտոնական կայք էջում հիմնականում տեղադրում է կանոնակարգերը, դասախոսներն ու ուսանողները տեղյակ չեն իրականացված հարցումների վերլուծություններից: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ արտաքին շահակիցների հնարավորությունները քոլեջը չի օգտագործում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը մշակել է որակի ապահովման գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տվել որոշակի հիմքեր ստեղծել քոլեջում որակի ապահովման համակարգի մշակույթի ձևավորման համար: Այդուհանդերձ մտահոգիչ է, որ որակի ապահովման գործընթացներն ինստիտուցիոնալ մակարդակում կանոնակարգված տեղի չեն ունենում, ինչը չի նպաստում ներքին և արտաքին միջավայրերի վերլուծությանը, արժանահավատ տվյալների հավաքագրմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ Որակի ապահովման պատասխանատուն մեծ ջանքեր է գործադրում քոլեջի բոլոր գործընթացների շարունակական բարելավման և որակի մշակույթի ներդրման համար, սակայն ամբողջ քոլեջում ներգրավվածությունը բարձր չէ: Փորձագիտական խումբը գտնում

է, որ ՈԱ քաղաքականությամբ սահմանված գործընթացների պարբերական ու լիարժեք իրականացումը, շահակիցների կարիքների վերհանումը և դրանց հիմքով վերլուծությունների իրականացումը, ինչպես նաև դրանց հիման վրա կատարվող բարելավումները կարող են նպաստել նաև կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը:

Դրական է, որ քոլեջի որոշ գործընթացներում ներգրավված են ներքին շահակիցներ՝ մասնավորապես, ուսանողներ, դասախոսներ, սակայն անհանգստացնող է, որ արտաքին շահակիցների հետ կապը թույլ է զարգացած, ինչպես նաև արտաքին շահակիցները դեռևս թույլ մասնակցություն ունեն որակի ապահովման գործընթացներին, առկա չէ գործատուների հետ համագործակցության շրջանակ, ինչը բացասաբար է անդրադառնում կրթական ծրագրերի բարելավման գործընթացների վրա: Արտաքին ու ներքին շահակիցների դերի հստակեցումը որակի ապահովման գործընթացներում կնպաստի որակի մշակույթի ստեղծմանն ու զարգացմանը և կապահովի ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք իրականացմանը, որը կնպաստի Քոլեջի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խմբի համար գնահատելի են որակի կենտրոնի կողմից իրականացված հարցումները, որոնք թույլ են տվել վերհանել ներքին և արտաքին շահակիցների որոշ կարիքներ, սակայն, կատարված հարցումների արդյունավետության գնահատում չի կատարվել, մշակված չէ վերլուծությունների ամփոփում–բարելավումների պլան: Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ապահովման կենտրոնն անհրաժեշտություն ունի տարեկան աշխատանքային պլանի, որտեղ կհստակեցվեն կարիքների գնահատման համար կիրառվող գործիքները, կկանոնակարգվի դրանց կիրառման ու արդյունքների վերլուծության պարբերականությունը, ինչպես նաև կհստակեցվի շահակիցների շրջանակը, սա թույլ կտա քոլեջում որակի ապահովման համակարգի ամբողջական ձևավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊԷՔ-ը ներդրել է ՈԱ կանոնադրություն և քաղաքականություն, առկա են ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմներ, փաստաթղթային հենք, որակի ապահովման ներդրված համակարգ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԷՔ-ը բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊԷՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է բավարար:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Չի բավարարում
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Փագիտական խմբի ղեկավար Արմենուհի Սարգսայն
(Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն)
13.06.2024թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. Արմենուհի Սարգսյան՝ 2006 թ.-ին ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ.-ին շնորհվել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ, 2017 թ.-ից առ այսօր՝ «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և SS» ամբիոնի դոցենտ: 2012-2016 թթ.-ին եղել է ԳՊՄԻ-ի Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ: 2017-2018 թթ.-ին եղել է ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, իսկ 2018-2023 թթ.-ին՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն: Մի շարք գիտական նախագծերում հանդիսացել և հանդիսանում է ավագ գիտական աշխատող, առաջատար գիտական աշխատող կամ ղեկավար: 2017 և 2019 թթ.-ին դասախոսությամբ հանդես է եկել Անգլիայի Քիլի համալսարանում, Erasmus+ շարժունության ծրագրի շրջանակներում: 2018-2023 թթ.-ին ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր հանդեսի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է, մինչ այդ (հիմնման պահից) հանդիսացել է պատասխանատու քարտուղարը: 2023 թ.-ից FAST-ի ավագ (senior) գիտաշխատող: 1 ուսումնամեթոդական ձեռնարկի և 80-ից ավել գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:

2. Գայանե Համբարձումյան՝ 2010թ.-ին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը՝ «Մաթեմատիկա» մասնագիտության բակալավրի աստիճանը: 2012 թ.-ին ավարտել է նույն համալսարանի «Մաթեմատիկա» մասնագիտության մագիստրոսի աստիճանը: 2010թ.-ից մինչ օրս աշխատում է Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջում: 2014-2016թթ. աշխատել է Աղավնատան Ղուկաս Աբգարյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես համակարգչային օպերատոր: 2014-2023թթ. Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջում եղել է «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ամբիոնի վարիչ: 2023 թ.-ից մինչ օրս՝ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ:

3. Օլեգ Գևորգյան՝ 2007թ.-ին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) Էլեկտրատեխնիկական ֆակուլտետի «Էլեկտրական տրանսպորտ» ծրագիրը՝ ստանալով դիպլոմավորված ճարտարագետի որակավորում: 2012թ. դարձել է տեխնիկական գիտությունների թեկնածու, իսկ 2015թ.՝ գիտությունների դոցենտ: 2007-2010թ. եղել է ՀՊՃՀ Կիբեռնետիկայի դեպարտամենտի կրտսեր գիտաշխատող: 2010-2015թթ. աշխատել է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ում ՝ որպես էլ. սարքերը սպասարկող մոնտյոր, իսկ 2015- 2019թթ. ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ)

Սակագնային քաղաքականության վարչության առաջատար մասնագետ, իսկ 2020-2022թթ. նույն ընկերության գլխավոր մասնագետ: 2016-2022թթ. եղել է ՀԱՊՀ «Էլեկտրոնային տեխնիկա» ամբիոնի դոցենտ, իսկ 2022թ.-ից մինչ օրս՝ ՀԱՊՀ «Էլեկտրոնիկա, կեսաբժշկանակ և չափիչ համակարգեր» ամբիոնի դոցենտ: 2022թ.-ից առ այսօր ՀԱՊՀ Տեղեկատվական և 62 հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի Գիտական, գիտատեխնոլոգիական համագործակցության և արտաքին կապերի գծով տնօրենի տեղակալն է:

4. Լիլիթ Նազարյան - 2020-2021 թթ. ավարտել է Արարատի մարզի, Արտաշատ քաղաքի Արարատ Գոլեցյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցը: 2021-2022 թթ. ընդունվել է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ, Հաշվապահական հաշվառում մասնագիտությամնբ: Այժմ սովորում է 2-րդ կուրսում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

10.06.2024թ.-12.06.2024թ.

	10.06.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամների հետ	12:20	13:10	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ (10-12 հոգի)	14:30	15:20	50 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ (10-12 հոգի)	15:30	16:20	50 րոպե
7.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	16:30	17:10	40 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում:	17:20	19:00	100 րոպե

	11.06.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ուսումնական մասի, մասնագիտական առարկայական հանձնաժողովների, անդամների հետ (ներառյալ Հանրակրթ. ծրագր. բաժնի ղեկավար)	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	11:10	12:10	60 րոպե
	Հանդիպում ՈՒսանողական խորհրդի անդամների հետ	12:20	13: 00	40 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտականխմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
4.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	14:20	15:00	60 րոպե
5.	Ռեսուրսների դիտարկում	15:10	16:10	60 րոպե
6.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի ուղղորդման պատ., պրակտիկայի ղեկավար, գրադարանավար, գլխավոր հաշվապահ, կադրերի բաժնի տեսուչ):	16:20	17: 20	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	19:00	90 րոպե

	12.06.2024թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Էլեկտրամատակարարում, Ջերմամատակարարում և ջերմատեխնիկական սարքավորումներ կրթական ծրագրերի պատասխանատուների և դասախոսների հետ	Հանդիպում Հաշվապահական հաշվառում կրթական ծրագրի պատասխանատուների և դասախոսների հետ	10:00	11:10	70 րոպե
2.	Հանդիպում Էլեկտրամատակարարում, Ջերմամատ. և ջերմատեխնիկական ՄԿԾ ՄԿԾ ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում Հաշվապահական հաշվառում կրթական ծրագրի ՄԿԾ ուսանողների հետ (10-12 հոգի)	11:20	12:20	60 րոպե
3.	Հանդիպում ՈԱ պատասխանատուի հետ		12:30	13:20	50 րոպե
4.	Ընդմիջում,փորձագիտական խմբի քննարկում		13:30	14:30	50 րոպե
5.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ		14:40	15:00	20 րոպե
6.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ		15:10	15: 30	20 րոպե
7.	Փորձագիտական խմբի փակ քննարկում		16:40	18:00	80 րոպե
8.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ		18:10	18:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆ

	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ
1.	Տարեկան գործողությունների պլան:	1
2.	Բոլոր ստորաբաժանումների աշխատանքային պլաններ և հաշվետվություններ:	1
3.	Արտաքին և ներքին շահակիցների կարիքները բացահայտող անցկացված հարցումներ, վերլուծություններ, արձանագրություններ:	1
4.	Գործատուների հետ կատարված հանդիպումների և բանավոր հարցումների վերլուծություններ, արձանագրություններ:	1
5.	Առաքելության և նպատակների իրականացման արդյունքները գնա-հատելու տարեկան հաշվետվությունները և ներքին գնահատում, տարեկան աշխատանքային պլաններ՝ ԳԱՑ:	1
6.	Բյուջեի նախահաշիվ և հաշվետվություններ 5 տարիների	2
7.	Կառավարման խորհրդի աշխատակարգ, ԿԽ նիստերի արձանագրություններ,Մանկավարժական խորհուրդի աշխատակարգ և նիստերի արձանագրություններ:	2
8.	Ուսանողական խորհրդի նիստերի արձանագրություններ ստորաբաժանումների պաշտոնի անձնագրեր	2
9.	Առարկայական հանձնաժողովի նիստերի արձանագրություններ:	2
10.	Քոլեջի տարեկան աշխատանքային պլան, Ուսումնական մասի տարեկան աշխատանքային պլան:	2
11.	ՌԾ-ի կատարողականի հիման վրա կատարված վերլուծությունները /եթե առկա են/:	2
12.	Ընտրովի ստուգումներ և աուդիտներին վերլուծուրյուններ,արձանա-գրությունները:	2
13.	Շրջանավարտների շրջանում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում անցկացվող բանավոր և գրավոր հարցումների վերլուծութ յուններ:	2
14.	Աշխատաշուկայի պահանջներին, Քոլեջում բարձրորակ կրթության ապահովման նպատակով մշտադիտարկման վերլուծություններ:	2
15.	Բաց և ցուցադրական դասերը, պլանավորված և չպլանավորված դասալսումները, արձանագրություններ, վերլուծություններ:	3

16.	Գնահատման թերթիկներ, ռեֆերատներ, քննական տոմսեր, ՊԱԱ հարցատոմսեր:	3
17.	Կրթական ծրագրեր կազմող աշխատանքային խմբերի, մասնագիտական առարկայական հանձնաժողովների կատարած աշխատանքների արձանագրություններ, վերլուծություններ:	3
18.	Վերջին 5 տարիներին ըստ մասնագիտությունների և կուրսերի ուսանողների քանակը:	4
19.	Ուսանողների արտահոսքի հստակ թիվ:	4
20.	Դիմորդների ընդունող հանձնաժողովի կազմ:	4
21.	Կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցմներ, որը ուղղված է ուսումնական հաստատության ստորաբաժանումների աշխատանքի բարելավմանը:	4
22.	ՈւԽ նիստերի արձանագրությունները	4
23.	«Կարիերայի խորհրդատուի գնահատման» հարցումներ, լրացված հարցաթերթիկի օրինակներ և արձանագրություններ, գործողությունների պլան վերլուծություն:	4
24.	Ռեֆերատներ, անհատական աշխատանքներ:	4
25.	Գնահատման թերթիկներ, ռեֆերատներ, քննական տոմսեր, ՊԱԱ հարցատոմսեր:	4
26.	Դասախոսների բաշխվածությունը ըստ կրթական ծրագրերի:	5
27.	Դասախոսների տարիֆիկացիոն ծանրաբեռնվածությունը:	5
29.	Վերջին 5 տարիների ընթացքում պարգևատրված, կամ նյութական խրախուսում ստացած աշխատողների ցանկ:	5
30.	2020ին հստատված Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգերը:	5
31.	ԴԿ-ին աջակցելու, նրանց մասնագիտական կարողությունները զարգացնելու, նախատեսված գործառույթները բարեխիղճ կատարելու գործում է խրախուսման քաղաքականություն:	5
32.	Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականություն և կարգ,միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր:	6
33.	Ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության վերաբերյալ հարցումներ, վերլուծություններ:	7

34.	Վերջին 5 տարիների հաշվետվողականության գործընթացը կանոնակարգող հաշվետվություններ:	7
35.	Ամենամյա հաշվետվության, օրենքով նախատեսված դեպքում նաև ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության հրապարակումը:	8
36.	Վերջին 5 տարիների Ուսխորհուրդի միջոցառումների պլանը:	8
37.	ֆինանսատնեսական և ամփոիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություններ:	8
38.	Քոլեջի կողմից գիտելիքի և մշակութային արժեքների փոխանցման նպատակով կազմակերպված տոներին և հիշատակի օրերի միջոցառունների ցանկեր, արձանագրություններ:	8
39.	կազմնակերպադաստիարակչական գծով փոխտնօրենի և դասղեկների վերջին 5 տարիների աշխատանքային պլանները:	8,5
40.	Համագործակցության պայմանագրեր, առաջարկներ:	9
41.	Համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպություն -ների հետ:	9
42.	Շարժունակության, լրացուցիչ շարունակական կրթության հնարավորությունների մասին տեղեկատվության տրամադրումը, ուսանողների և շրջանավարտների հիմքեր:	9
43.	Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում մասնագիտության ուսանողների այցելությունների հիմքերն: /Արև էներջի ՍՊԸ, որտեղ անցկացնում են վարպետի դասեր և տիրապետում նոր կարողությունների/:	9

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. 2 մասնաշենք՝ ուսումնական, վարչական
2. Լսարաններ
3. Առարկայական կաբինետ-լաբորատորիներ
4. Հանդիսությունների դահլիճ՝ 360 նստելատեղով
5. Անվտանգության կաբինետ
6. Էլեկտրոտեխնիկայի լաբորատորիա
7. Էներգետիկայի լաբորատորիա
8. Գազամատակարարման սարքերով կաբինետ
9. Սլայդ լսարան
10. Ամբիոններ
11. Գրադարան
12. Ընթերցասրահ
13. Ապաստարան
14. Ճաշարան /չի գործում/

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԱՊԷՔ	Աբովյանի էներգետիկական պետական քոլեջ
2. ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
3. ՀՀ ԿԳՄՍՆ	Հայաստանի հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
4. ՈԱԱԿ	Որակի ապահովման ազգային կենտրոն
5. ՄՈՒՀ	Մասնագիտական ուսումնական հաստատություն
6. ՈԱԾ	Որակավորումների ազգային շրջանակ
7. ՊԿՉ	Պետական կրթական չափորոշիչ
8. ՄԿՈՒԶԱԿ	Մասնագիտական կրթության զարգացման ազգային կենտրոն
9. ԻՎ	Ինքնավերլուծություն
10. ՄԿԾ	Մասնագիտական կրթական ծրագիր
11. ԿԾ	Կրթական ծրագրեր
12. ՌԾ	Ռազմավարական ծրագիր
13. ՈԱԿ	Որակի ապահովման կենտրոն
14. ԳԱՑ	Գնահատման առանցքային ցուցանիշներ
15. ԿԽ	Կառավարման խորհուրդ
16. ՈՒԽ	Ուսանողական խորհուրդ
17. ՄԽ	Մանկավարժական խորհուրդ
18. ՊԴԿ	Պրոֆեսորադասախոսական կազմ
19. ՈՒԱ	Ուսումնական արդյունք
20. ՄԼԸ	Միջնակարգ, լրիվ, ընդհանուր
21. ՈՒՕԿ	Ուսումնաօժանդակ կազմ